

## ՅՈՂՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՔՆՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԼ Ց. ՕՇԱԿԱՆԻ  
ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻԱՆԵԱՆ ՎԵՊՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼԵԱՆ  
[spyurksd@spyurk-center.am](mailto:spyurksd@spyurk-center.am)

Ականաւոր արձակագիր, գրականութեան պատմաբան, բարքագիր, մտածող Յակոբ Օշականի (1883-1948) հարուստ ժառանգութեան մէջ կենսական ծաւալ են կազմում, այսպէս կոչուած, զուգակշխոները, որոնք գծուած են ազգային գրական երկու համակարգերի միջեւ<sup>1</sup>: Նա ուրախ է, որ մրցակցութեան առողջ հովեր կան երկու աշխարհներում, աշխատում է բնական խանդալից վերաբերմունքից ձերբագատուել, երբ իբրև գիտնական՝ չափ է կարգում իր մօտեցումներին («Զուգակշխութիւններ»), ու Արեւելահայ եւ Արեւմտահայ Գրականութեանց», «Արեւելահայ Բանասիրութիւնը եւ էջմիածին». Գարեգին Կաթողիկոս Յովսէֆեան»): Եւ ընդհակառակը, ազատ յորձանք է տալիս զգացումներին, նախասիրութիւններին, երբ դիմում է նրանց գեղարուեստական նախահիմքերին (Մաթիկ Մելիքիսանեան):

Յակոբ Օշականի Մաթիկ Մելիքիսանեան վէպը մեր գրականութեան մէջ ունի ընկերային կեանքի մշակութաբանական քննութեան սուր յաւակնութիւն, ուր կարծես նախընտրութեան վիճարկելիութեան սկզբունքով կազմուում են արեւելահայ եւ արեւմտահայ երկու համակարգերի համադրական եւ հակադրական երազերը: Նրանք երբեմն ազգային համընդհանուր շահերի թելադրութեամբ մերձենում են, իսկ աւելի յաճախ՝ նոյն ժողովրդի կցութեան, լեզուական եւ «աշխարհագրական» ճակատագրի, տիտուր դասերի մասնայատկութիւնների գերակայ դարձած սկզբունքների բերումով յանգեցրել եւ յանգեցնում են յայտնի տարանջատութեան, որը, ընդունենք, առ այսօր յաղթահարուած չէ:

Վէպը գրուել է արձակագրի կիպրոսեան կեցութեան շրջանին (1926-34), աւելի ճիշդ՝ նրա երկրորդ շրջանում, երեսնականներից սկսած: Այդ միջոցը ճանաչուել է նրա ամէնից արգասաւոր ժամանակը՝ իւրատեսակ «բոլղինեան աշուն»: Տարօրինակն այն է, որ վէպն առաջին անգամ տպագրուել է Պէլլութի Բագին ամսագրում միայն 1970ականների կէսերին, գրողի մահից տասնամեակներ անց, այն էլ՝ օշականագէտ Պօղոս

Մնապեանի անդուլ բնագրական աշխատանքի արդիւնքում: Յապաղումի նման «դաժան» օրինակը գրքերի հազուագիւտ ողբերգական ճակատագիրն է: Ցաւօք, միայն Օշականի պարագային դա արտայայտուել է քանիցս. աւելի արտառոց փաստը միւս մշակութային վէպի՝ Սահակ Պարգևեանի տպագրութեան պատմութիւնն է, որի հանդիպումը ընթերցողի հետ հնարաւոր եղաւ նոյն Բագրինի էջերում արդէն 1982-1983ին: Առանձին գրքով հրատարակութիւնները, բնականարար, շատ աւելի ուշ շրջանի ծնունդ են, ընդ որում՝ խնդրոյ առարկայ Մաթիկ Մելիքիաննեան վէպը, նկատենք, աշխարհ եկաւ միայն 2010ին:

Բնագրից պարզ է, որ վէպն աւարտելուց յետոյ էլ, մինչեւ 1940ականների առնուազն սկիզբը, Օշականը շարունակել է նիւթի մշակումը: Այսինքն, «չոր» հաշուով, շուրջ մէկ տասնամեակ Մաթիկ Մելիքիաննեան վէպը մնացել է հեղինակի գրոյ սեղանին, անցել խմբագրման ու վերատեսութեան երկարատեւ շրջան, ընդգրկել նորագոյն շրջանի պատմական արձագանքներ<sup>2</sup>: Ցայտնի է կիպրոսեան, յետագայում եւ երուսաղէմեան ճգնաւորի բժախնդիր, պատասխանատու վերաբերմունքը առհասարակ գրական եւ պատմական նիւթի, բառի եւ պատկերի նկատմամբ: Մտային կառոյցը բնագար էր իր համար, որ աստիճանարար զտում էր, մաքրում, բիւրեղացնում, մօտեցնում գեղարուեստական ընկալման, իր բառով, «ճարտարապետական» խորհրդին:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Արձակագիրը երկը առանձնացրել է Մնացորդաց վիպաշարի ծրագրած բուն բարքագրական յորձանքից՝ փորձելով հիմնաւորել, թէ «վիպային իրադարձութեան հետզիեստ ընդարձակուիլը, ծանրաբեռնուիլը յորդումի զիսաւոր պատճառը կազմեցին»<sup>3</sup> այս քայլի: Բայց այստեղ բարքագրութիւնը շարունակում էր մնալ իր տեսադաշտում՝ առաջադրութեան խոր գիտակցութեամբ:

Իրականութեան մէջ իր նշած «յորդումը» մշակութային տեսողութեան ինքնայրդումի վկայութիւնն էր, նոր ձեւուած յետահայեաց մեկնութեան քննական կերպ: Ահա թէ ինչու ինքը յայտարարում է վէպերի տարանջատումից բխած իր անմիջական, գուցէ եւ անհամեմատ համեստ գրական խնդրի մասին, թէ այլեւս «...չը յաւակներ աշխարհներ նուանել: Այդ զիսաւոր նկատառումն է, որ թելադրեց անջատումը»<sup>4</sup>: «Աշխարհներ» ասելով գրողը նկատի ունի ժողովրդի հոգեկան կերտուածքի բազմածալ յատակագիծը, բարքագրութեան գեղարուեստական նախահիմքը:

Բանն այն է, որ Մաթիկ Մելիքիաննեան կերպարին դիմելով երկրորդ անգամ<sup>5</sup>, նա լուծում է ինքնուրոյն վիպական յանձնառութիւն: Հերոսն այստեղ «վաղ շրջանի» դէմքն է, որ յեղափոխական գործունէութեան առաջին ճանաչողական քայլերն է անում: Սակայն Մնացորդա-

ցի երկրորդ՝ Արիւնի Ճ'ամբով գրքի գեղարուեստական դրուազներում մենք նրան տեսնում ենք կեանքի եղրագծի առջեւ՝ նահատակութեան շրջանում, իմաստնացած ազգային նպատակի «կենսաշերտի» յործանքում, ուր կան հատու գործողութիւններ, բայց համեմատական կարգով բացակայում է հերոսի ներաշխարհի քննութիւնից բխող գրողական հակազդեցութիւնը, ինչը փորձում է վերանուաճել աւելի ուշ՝ առանձնացնելով հերոսին գործողութեան տարափից, բերելով նրան հայեցողական մտայնութեան յարաբերական սկիզբ։ «Եւ որովհետեւ մէկ հատիկ նարդ աշխարհ նը ազդունք է եւ հակազդունք, կը հասկցուի, թէ Մելիքիսանեանի առիթով ես ըլլամ փորձուած այդ աշխարհը նուաճել ուժերու ներած շափով»<sup>6</sup>։

Վիպաշարից վէպի առանձնացման դրդապատճառներից մէկը նիւթի հանդէպ գրողի խանդաղատանքն էր, երազուած մի տիրոյթ, ուր ինքը կանխազգում էր ազգային գրական ասպարէզում առաջիններից լինելու բերկրանքը։ Խօսքը վերաբերում է մշակութային վէպի «տարագին», եզր, որի մէջ բացւում էր հայ մտածողութեան գրամշակութային ճանաչողութիւնը։ Սա նոր ճանապարհի սկիզբ էր, ուր գրական աւանդոյթի մշակոյթը յինւում էր ոչ այնքան իրադարձութեան կամ գաղափարի բացառիկութեան վերհանման, ազգային գիտակցութիւնը պատմութեան ծալքերում անընդմէջ գտնելու ու վերագտնելու ինքնարաւութեան, որքան եւ առաջին հերթին՝ մշակութային դիմագծերի յաջորդական վերակազմումի փորձի վրայ։ Դա միայն կենսագրական կամ անհատի դերի գեղարուեստական հարցադրում չէր, այլեւ պատմութեան մէջ մշակութային շարժման, անգամ՝ բախումի շնորհիւ ընկերային բարքագրական հայեացքի խորացում ու հասունացում։

Անկեղծ լինենք՝ նման անհատները կամ շարժումները ի յայտ են գալիս պատմութեան մէջ ժողովրդի բարդ, հանգուցային տեղաշարժերի ժամանակ, երբ փոխում է ոչ միայն բմբունումի տեսանկիւնը, այլեւ պատմութիւնն առ հասարակ։

Նախ, նկատենք, որ Օշականը նախընտրում է յեղաբեկիչ պատմութեան հոգեբանական ծալքերի բացայայտումը ոչ թէ հզօր անհատի, այլ միջավայրի համընդհանուր շղթայի շնորհիւ, քանի որ անհատը, դասական գրական փորձից ելնելով, իր վրայ պատմական որոշ ծանրութիւն, ճիշդ է՝ վերցնում է, բայց յաղթահարել չի հասցնում։ Վէպում այնքան էլ զօրեղ չի թւում Մաթիկ Մելիքիսանեանի ներքին տեսողութիւնը, նա երբեմն չի որսում իր «ծանրութեան»՝ առաքելութեան բուն արժէքները, թէեւ հեղինակը փորձում է նրան պահել «գաղափարի ջուրերու վրայ»՝ ընդգծելով թերեւս նրա փափկակենցաղութիւնը։ չէ՞ որ նաւթի իշխանի թռու էր, իրեն կարող էր թոյլ տալ գնալ բուժելու յօդացաւը ֆրանսիայի ու Գերմանիայի ջրերում (գրեթէ ուրիշ կարգի յեղափոխա-

կան Միքայէլ Նալբանդեանի (1829-1866) անցած ճամբէքով), բայց ի վերջոյ՝ ապարդիւն:

Հերոսին հեգնում է ժամանակը, հերոսին հեգնում է հեղինակը, բայց ակնյայտ է այս ամէնի յաղթահարման մէջ նոյն հերոսի՝ ինքնազբաւորուելու անմիջական ջանքը: Երուանդ Օտեանի (1869-1926) եւ Օշականի համար նրանք իւրատեսակ Դուն Քիշուներ են՝ ժամանակի ու պատմութեան վրայ ազդելու («Հակազդմունքի») իրենց աւանդեական անգօրութեամբ: Պատահական չէ Մաթիկ Մելիքիսանեան վէպում ընկ. Փանջունու եւ ընկեր Մաթիկի հայեացքների միջեւ ընդհանրութեան աղօտ փնտուուքը: Անտեսելու չէ նաեւ արեւմտահայ մտածողութեան մէջ նկատուած Դուն Քիշուի կերպարի բացասական լիցքերի գերակայութիւնը, մինչդեռ ոուսական ընկալումից ածանցուած հայեացքում, Լամանչեցին դրական ազնիւ խոհերի տիրակալ է, որին շրջապատում չեն հաւատում պարզապէս, քանի որ անցել են այն ժամանակները, երբ գործում էին ազնուութեան կոչնակները, իսկ իր ժամանակը «ուշացած» էր:

Մաթիկը կարծես որոշ չափով համապատասխանում է Դուն Քիշուի «ոուսական» ընկալման կառուցին. նրա մէջ հեղինակը տեսնում է մանկունակութիւն: «Մանուկ մըն էր, հակառակ մեծ զարգացումին»<sup>8</sup>, շեշտում է վէպի սկզբում: Այնուհանդերձ, նա աւելի ընդհանուր յորժանքում է, ենթակայ՝ ազգային-քաղաքական ջրերի տատանումներին:

Կենսագրական գրական-գեղարուեստական քննութիւնը մշակութային հարուստ ենթահող է՝ համաշխարհային գրականութեան մէջ ժողովրդի «կենդանագիրը» (Օշականի արտայայտութեամբ) մատուցելու ճանապարհին. ասել է թէ՝ որքան խորն է գրողական տեսողութիւնը, որքան մեծ նպատակով է բացուած ընտրուած հերոսի հոգեւոր-մշակութային առաջնորդութիւնը ժողովրդի կեանքում, այնքան լայնահուն է այն ճանապարհը, որով անցնում է վերջինս պատմութեան քառուղիներով, յաշս հեղինակի եւ ընթերցողի:

Հայ գրականութիւնը, սակայն, չի փայլում մշակութային ժառանգութեան բազմապիսի եւ տարանկիւն քննութեամբ: Ազգային գեղարուեստական տարածքներում եթէ անգամ յայտնուել են առաջնորդող կատարելատիպ անհատներ (Տիգրան Մեծից սկսած հայոց արքաների, զօրապետերի անվերջանալի տողանցք, Վարդան Մամիկոնեան, Ղեւոնդ, Գէորգ Մարգարետունի, Սասունցի Դաւիթ, Սամուէլ եւ ուրիշներ), նրանք, այնուամենայնիւ, մնացել են «գաղափարի» մարտիկի, ազգայինի գիտակցութեան, լինելութեան «կոչունքի» լրջանակում, նրանց զգայի մասը չի կրել ժողովրդի նկարագրի բարոյահոգերանական բարձրագոյն շերտերը, աւելին՝ վերջիններս հիմնական ճանաչողութեամբ մնացել են «կիսաբաց»՝ ազգային գրականութեան մայր դարպասների մօտ:

Օշականն այն կարծիքին է, որ հայ գրողների համար յաղթահարման դժուարին ճանապարհ մնացել եւ մնում են մշակութային էռթեան, անհատի եւ հաւաքականութեան վերագրային ընկալման սահմանները, այն տագնապը, որ յարուցուել է ընկերային-քաղաքական խորքերում՝ իրրեւ մարդու եւ մարդկայինի խեղման վկայութիւն։ Գրողները երեւոյթը գրեթէ միշտ վերբերել են ազգային առարկայացման եզրից՝ դրանով ցցուն դարձնելով գրականութեան հայրենասիրական երակը։ Մեհեանի էջերից Օշականը յայտարարում էր, թէ զուտ ազգայինը ածանցեալ է, քանի որ իրենց «Վճիռները կը բխին մեր անհատականութենէն։ արուեստն ու գեղեցիկը անհատին կը պատկանին»<sup>9</sup>։

Ժողովրդի գոյամարտի, հայորէն ապրելու գիտակցութեան պարտադրուածութիւնը յանախ գրականութեան բուն նշանակութիւնը շրջափոխել է ազգային լինելութեան սոսկական արժէքի։ Մի տեղ գրողը յայտարարում է. «Պիտի զգուշանամ, որքան կարելի է, դատումներ բանաձենել։ Այսօրուան մեր հոգեվիճակը շարունակութիւնն է այդ օրերու (1900ականների – Ս.Դ.) գաղափարաբանութեանց։ Ծահուած։ - Կայ կետ մը, աստ ալ մեր գիտակցիլն է մեր պատրանքին։ Ազգերու երջանկութեան, ազատութեան համայնապատկերներուն բղորանուեր մեր յարումը...Ու ի՞նչ սույլ վճարեցինք սա խեղճ փորձառութիւնն...»<sup>10</sup>։ Մի այլ տեղ նա ազգային մտածողութեան միակողմանի, ոչ գեղարուեստական լայն չափումի մեղաւոր ճանաչում է հայ պատմագրութեան «տխուր» ընթացքը<sup>11</sup>։ Խօսքը վանքերի որդեգրած ուսումնառութեան մեթոդներին է վերաբերում, ուր կարծես «փրկութիւն չունեն» նաև Արմաշի դպրեվանքի սրբագրուած ուսուցչապետեր, «Հոգի հասկցած» Եղիշէ Արք. Դուրեհանն (1860-1930)<sup>12</sup> ու Ռւիլիամ Շեքսպիրի (1564-1616) գիտակ թարգմանիչ Թորգոմ Արք. Գուշակեանը (1874-1939), քանի որ հեռացրել են ծարաւի պատանի սերունդներին մատենագրութեան ոգուց ու շնչից։ Երեսուն տարի պէտք եղաւ իրեն դէպի մատենագիրները հոգով վերադարձի համար, խոստովանում է ինքը իսկ միւսների պարագային։ արդեօք շատերը - տարակուսում է հեղինակը - ունեցան յաղթահարուած նման վերադարձ<sup>13</sup>։

Հենց նոյն հատուածում նա անդրադառնում է գլխաւոր հարցադրումին՝ համեմատութեան՝ մեզ համար անբարենպաստ յայտարարով։ «Ուրիշ ազգերու պատանիները իրենց անցեալէն ո՛չ թէ կը վոնտուէին, այլ կը քաշուէին։ Վանուած այդ աշխարհէն՝ ստիպուած էի դառնալ ներկային»<sup>14</sup>։ Խօսքը աշխարհի մշակութային իւրացման հայկական բարդոյթի յարուցած առարկայական դժուարութիւնների յարատեւութեան մասին է։

## ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՀՆԿԵՐԱՑԻՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԳԾՈՒՄ

Վէպի դիպախաղը վիպական գործողութեան հետ առնչութիւններ քիչ ունի, եթէ ասելու չիննենք՝ չունի: Մաթիկը գալիս է «Հայաստանին հազարաոր թիլօմերով բաժնուած ու բրութեան ծովուն մէջ տառացի խեղդուած»<sup>16</sup> Բութանիա, աւելի ճիշդ Մարմարճքը՝ տեղանքին, եւ գիւղական վերաբերմունքի մէջ քաղաքական, ասել է թէ՝ յեղափոխական տրամադրութիւնների հետ տարօրէն, հպանցիկ ծանօթութեան համար: Իրականում Բութանիայում նա հանդիպում է ընկերային ծայրաստիճան թշուառութեան, գիւղացինների իրական տագնապներին, թուրքական իշխանութեան հետ վախի իրատեսական մթնոլորտի, որոնց այդպէս էլ, ըստ էութեան, անհաղորդ է մնում երիտասարդ յեղափոխականը: Երկշաբաթեայ կեցութիւնը Պատմական Հայաստանից դուրս նա լցնում է իր շատախօսութեամբ, մինչդեռ հարկ է որ լինէր դիտողունակ, հարկ է որ Մարմարճքի ուսուցիչ հերոսն ու գիւղացինները, նաև Սփիւրքի ընթերցողը (թէկուզ գոնէ անցեալ դարի 40-70ականներ, այսինքն՝ ընդհուպ մինչեւ վէպի առաջին տպագրութիւնը) նրանից վարակուէին յեղափոխութեան տարրերով, հասկանային ժողովրդի հանդէպ շարժման գորովագութ այն վերաբերմունքը, որը պիտի պատրաստէր յետագայում պայքարի տարաբնոյթ ընկալումներին:

Շարժման գործիչների նկատմամբ դժգոհութիւնը, այնուհանդերձ, անձերից չէ, այլ նախապատրաստական կոյր շրջանից, բուն գործի, ժողովրդի կեցութեան, վիճակի հանդէպ համընդհանուր անտարրերութիւնից<sup>10</sup>: Մաթիկի մէջ դնելով անուղղակի, բայց ճանաչողական խիստ թիրախներ, երբ յատկապէս հերոսը հասնում է մակերեսային ընոյթի որոշ կասկածների, Օշականը փորձում է ազատագրել իրեն ու ժամանակի մտայնութեանը այն պատրանքներից, որոնք հեռացնում են գաղափարը ճշմարտի հանդերձներից: Միջամտելով հերոսի գեղումներին՝ նա ուղղորդում է գաղափարի յածումները ազգային նպատակների շուրջ կասկածների արահետով: Մաթիկը միջնորդ է, գաղափարի իրագործման գործադիր: Մաթիկը պատանդն է ու զոհը «գաղափարի» ներքին ծալքերում՝ այդպէս էլ առարկայի մակերեսից չհասնելով էութեան տարրերին: «Այն ատեն չի տառապեր, քանի որ իր պատմածները կը դպէին երեակայութեանս, հեռու դատողութենէս, - խորհրդածում է հեղինակը՝ բացելով յեղափոխական շարժման սնանկութիւնը շատ աւելի ընթերցողի համար: - Հերիաք: Բայց պիտոր: Այդ պիտորութիւնը տարօրինակ է, որ հաստատեմ իհմա ալ, յուշերուն մէջ անոնց, որոնք շարժումին մասնակցած են անձնապէս, պատասխանատու դերերով, յաճախ իր վարիշ: Յեղափոխականներու յուշերը կը ծփան նոյն տարտամութեան մէջ...»<sup>17</sup>:

Օշականի վերաբերմունքի մէջ բեկւում է երկու ծայրակէտ. «ազգային փրկութեան» առաջին սահմանը երեւակայութեան սնուցիչն է, ո-

րին զոհաբերւում է պայքարի տրամարանութիւնը, որը թույլ չի տալիս տեւականօրէն կատարելու պարառութեան, համաժողովրդական աղէտի սթափ վերլուծութիւնը, հակամարտ ուժերի յարաբերակցութեան հաւասարակշիռ գնահատութիւնը 1900ականներից սկսած քառասուն տարիներ ի վեր: Դրա «մեղաւորութիւնը» նա տեսնում է արեւմտահայ, ինչու չէ, նաեւ՝ արեւելահայ, գրականութեան գաղափարների գաստիարակութեան աւանդոյթի բացակայութեան փաստի մէջ: «Մշակութային ... մեծ հորիզոններու չգոյութիւնը գրողները պահեց իրենց համեմատական միջակութեան, ինքնարաւորթեան սահմաններուն մէջ: Իրենց խուելն և իրենց հետ նոյն սահմաններուն մէջ պահեցին իրենց ընթերցողները: Մասնաւորաբար իմաստափրական հետաքրքրութեանց պակասը այդ տիսխիլիններուն մէջ կազմուած երիտասարդութեան որ համար՝ այնքան աղետաբեր ըրաւ արեւմտահայ գրականութիւնը:

Արեւմտահայ գրականութիւնը թիշ մը գաղափարային հարցերու համար անյարմար միջափայր է: Իր քննադատութիւնը երբ դատեցի, դժուար չեղաւ ինձի անոր մէջ շիատատել ոչ մէկ իմմական, մեր ժամանակներուն մէջ կենսական, նորոգիչ գաղափարագրութիւն նը..., վերջապէս միջազգային գրականութիւնը յուզող, ընկերային, գրազիտական, իմաստափրական մեծ հարցերու շուրջ գրեթէ բացարձակ մեր բոպիկութիւնը դէաբեր են, որոնք կը վիրաւորեն արեւմտահայ գրականութիւնը: ...Աւելի քան ոորալի է արեւելահայ ճիզը, որ այս ամենուն հետքը, նշնարքն իսկ չկայ»<sup>18</sup>:

Գաղափարների քննութեան սահմանագիծը հատում է այսօր հարիւրամեայ մի ժամանակաշրջան, իսկ օշականնեան այս հայեացքը «ազգամին հայրենասիրութեան» լայն շրջանակի համար շարունակում է մնալ «պարտուղական», ճնշիչ գործոն: Դժուարը, գրեթէ անհնարինը առաջին երակէտից դէպի երկրորդ հանգրուան ճշմարիտ, գիտակից քայլն է, այն բուն հարցազրման ալքերում, թէ, վերջապէս, ինչպէս է, որ «փըթաւ» Աղէտը. «Ինձի կո զայ, թէ զաղտագողի, անպահով անցըն է պատճառը սա անճշտութեան, որ չի դադրիր վաւերական իր կնիքեն, քայց կը տպաւորէ հակադիր նարզով: Տերորի այս անկատարութիւնն է, որ կ'արձագանգէ իր մէջ կատարուած գործողութեանց վրայ ու մեզ կ'ընէ մտաշփոք շատ մը դէաբերու ընրոնումի մէջը»<sup>19</sup>:

Արձակագիրը ասպարէզ է հրաւիրում հայ յեղափոխութեան ամէնից առասպելական մտքին՝ Անդրանիկ Օզաննեանին (1865-1927), որի յուշերում, լուս նրա, պարզուած չեն «կոռուպին դէմքն ու դերը: Ամէն ինչ բոյլ է, աղկադիկ, անկազմակերպ, ծրագիր, գործելակերպ, նախապատրաստութիւն, գործադրութիւն»<sup>20</sup>: Ակնրախ է, որ գրողի ու պատմութեան դատին յանձնուածը միայն անծը չէ, այլ շարժման վերատեսութեան ձգտումը, որը լուելեայն շրջանցուել է գրականութեան մէջ: Հերոս ունենալու իրաւունքը աւելի բարձր նպատակ է սեպւում քաղա-

քական մտքի դիմաց, քան պատմութեան մէջ պարտութեան ծանրագոյն պատճառներին անդրադառնալու քաջութիւնը՝ Ալլապէս գերիշխում է առասպելի կորստեան տագնապը։ Առասպելացած հերոսը երազ է պահում, նա ուժի ներգործութիւն է ապագայի սերունդների համար։ «Ալլպէ՞ս՝ նաեւ իրականութիւնը։ Չեմ կարծեր, թէ անփութութեան, անձանաշուրեան, բախտովի յառաջացման այսրան մեծ մեղքեր ներին իրենց մարդիկ, որոնք հսկայ դատի մը լուծումներ ստանձներ են։ ...Այդ հաւատակուր մարդերուն ուսումնասիրութիւնը, առանց մահուան սպառնալիքին, յեղափոխական շապիկը հանգստական պայմաններու մէջ անգան կարօտ է լայն, մանրամասն ճշդումներու, սրբագրումներու»<sup>21</sup>։

Այստեղ հարկ է թերեւս շահնուրեան երկու փակագիծ ուրուագծել՝ վերարծարծելու համար «յեղափոխական» կոփուածութեան հետեւանք եղերական իրադարձութիւնների եւ դրանից տարանջատ՝ Զօրավար Անդրանիկի ընկարման առումներով հայ գրողների տեսակէտերը։

Նախ, Շահան Շահնուրը (1903-1974) Գուրգէն Մահարուն (1903-1969) ուղղած նամակում տալիս է ազատագրական պայքարի «գէշ կազմակերպուած» էութիւնը, որը արթնացրել էր գազանին<sup>22</sup>։ Այստեղ գնահատութեան խնդրում կարծես կարգուած է անվիճելի եռամիասնութիւն՝ Օշականի «քահանայապետութեամբ», թէեւ Շահնուրը ամէն առիթով ընդգում էր վերջինիս արդարեւ բարդագրութեան դէմ<sup>23</sup>, յանախ խոյս տալով նրա հայեացքի մանուածապատ ձեւակերպումներից։

Երկրորդը վերաբերում է Անդրանիկի դերի բացարձակացմանը, որը թոյլ է տալիս Փրանսահայ արձակագիրը։ Կոմիտասի (1869-1935) առթիւ 1935ին նա հնարաւորութիւն է ստանում խօսելու հայ մշակութային նախահիմքերի մասին՝ առանձնացնելով չորս տարրեր, որոնցով ողողուած է հայ պատմամշակութային դաշտը։ Մեսրոպ (361-440), Կոմիտաս, կաթողիկէ եւ Անդրանիկ։ «Ազատն Կոմիտաս» յօդուածը վաւերաթղթի արժէք ունի։ Հարցը բորբոքուեց 35 տարի անց, երբ հայրենի բանաստեղծ ու այս դէպքում՝ նաեւ խմբագիր Վահագն Դաւթեանը (1922-1996) սուսեր փորձեց ճօնել՝ չտարանջատելով անձերի խորհուրդը ազգային բարձր, յաւերժող կեցութեան չորս հիմնական արժեւորումների փորձից՝ գրամշակոյթ, երաժշտութիւն, եկեղեցի եւ վերջապէս այս ամէնի պահապան դինուորը։

Հակառակ այն բանի, որ ազատագրական պայքարի արդիւնքին Շահնուրը հաւատ չէր ընծայում, այնուհանդերձ Անդրանիկին առանձնացնում է իրեւ հաւաքական խորհրդանիշ, իրեւ միւս երեք ձեւերից նիւթին անցնող երաշխաւոր յայտարար։ Նա ակներեւ հակասութեան մէջ է մտնում իր «տեսութեան» հետ։ չէ<sup>24</sup> որ «յեղափոխական» կոչուած ուժին մաս կազմած Անդրանիկը չկարողացաւ պահել-պահանել Կոմիտասի վերացարկուած երեւոյթը։ Այդ հոգեկան «անհաշտութիւնն» իր՝

Հեղինակի մէջ է, ձեւերի ու խորհրդանիշների խաղարկումներում, բանաձեւումների ու պատմութեան խորքային հակասութիւններում: Ինքն էլ ճիշդ Օշականի պէս խոստովանում է՝ «Վարդապետը... կ'ըլլայ մեծագոյնը Ապրիլ 11ի ներ կորուստներուն»<sup>24</sup>: Խոստովանում է, բայց չորս յենասիւները խճճել չի ցանկանում: Դրա փոխարէն, նոյն արդ շրջանում, 1930ականների ուղիղ կէսերին, այս յանձնառութիւնն ստանձնում է Օշականը, որի մօտ մարտիկի անձը մնում է, ինչպէս նշեցինք՝ «Հաւատակուո», ինչը նոյնպէս անտեսելու չէ վիպագրի բնագրում:

Վերադառնանք, սակայն, ֆրանսահայ գրական շարժման առաջնորդի գիտողութիւններին, լայն կարկինով՝ «մշակութային» ամրող-ջութեան ընկալմանը: Զնայած քննութեան առկայ շփոթի այս տեղատարափին՝ նրանք բոլորի համար ներսից այրուող ա՛յլ լոյսի խորհրդակիրներ են, որոնք «շար ի շար կ'առկախութին քիրեղեայ ողկոյզներու նման եւ կը մնային զոց իրենց ներքին լոյսին վրայ»<sup>25</sup>: Մեր համոզմամբ՝ Վահան Թէքէեանի (1978-1945) ծրագրային բանաստեղծութիւնից պարզապէս բխող պատկերի վերաշարադրումը<sup>26</sup> Շահնուրը ծառայեցնում է առհասարակ իրեւ արուեստի ու մշակոյթի բարձրագոյն պայմանաձեւ, որն ինքը կոչում է «ազատութիւններ»: Այստեղից՝ Կոմիտասի «ազատն» բնութագրից: Ընդ որում՝ ուշագրաւ է, որ ըստ Շահնուրի՝ Կոմիտասը նաեւ բանաստեղծութեան արժէքի կենդանագիրն է, գրեթէ Եռուհիմ Հերդէրի (1744-1803) նշանառութեամբ՝ երաժշտութեան սկզբնաւորողի բնարուխ, ժողովրդական շարունակութիւն: «Կոմիտաս, որ այդ կողմներն [Գերմանիայով], շվարաննեաւ, ի պահանջեալ հարկին, մեր «մայրենի լնգուն» յդկենլու, ինչպէս ... մշակը կը մարք իր հողածածկ զանձը: [Ժողովուրդի] Հում բնագիրէն քիչ բան փոխեց Կոմիտաս...: Միակ բարի նը, նոյնիսկ վաճկի նը փոփոխութիւնը բաւ է, որպէսզի բանաստեղծութիւնը նուազի կամ թեւածէ: Այս իմաստուն միջամտութիւնը գրաւականն էր այն սուր զգայնութեան, որով Վարդապետը կը բափանցէր բանաստեղծութեան ոգիին»<sup>27</sup>: Անվրէպ է արձակագիրը իր նշանակէտում: Կոմիտասը երգն ու ժողովրդական տարերքը միաւորեց բանաստեղծական լուսականի ներքոյ: Պատահական չէ, որ նոյն յօդուածում, քիչ աւելի վերը, նա երազում էր հինգերորդ, արդէն առարկայական գագաթը՝ «այս անզամ գրական-իմացական դասն»<sup>28</sup>, իրեւ ցանկալի յաղթանակի յիշատակութիւն:

Օշականի պատկերացումով՝ «Այդ Գերմանիան չէ որ անշուշտ ստեղծեց Կոմիտասը: Բայց առանց այդ Գերմանիային Կոմիտաս դժուար թէ ըլլար ան զոր եղաւ»<sup>29</sup>: Տարբեր ճանապարհով Շահնուրն ու Օշականը հասնում են նոյն արդիւնքին, քանի որ նոյն մշակութային հարցադրումները կենսական հնչողութիւն են ստանում նրանց հայեցքներում: Նրանք պատասխաններ են փորձում գտնել ազգային մշա-

կութային դիմագծերի ամբողջականութեան պաշտպանութեան եւ նրա մէջ արեւմտահայ-արեւելահայ յայտնի հատուածայնութեան դիմաց հայութեան անպաշտպան վիճակի առթած հիմնախնդիրներին, հանգամանք, որի մասին Օչականի հետ համընթաց նոյն 30ականներին ահազանգել էր Շահնուրը<sup>30</sup>:

Կոմիտասի գնահատութեան առումով իրարից տրամագծօրէն հեռու Շահնուրն ու Օչականը մերձենում են զարմանալի նման ձեւակերպումներով: Դա ուշագրաւ է նաեւ ժողովրդական արուեստի միասնական ըմբռնման տեսակէտից: Իր «Զուգակշիր Արեւելահայ եւ Արեւմտահայ Գրականութեանց» դասախոսութիւնների գրքում գրողը սեղմընութագրումով մատնանշում է: «Միւս շարժումն է Կոմիտաս Վարդապետի հոյակապ վաստակը: Հանճարեղ երգահանը իր հաւաքումները ենթարկած է որոշ հպումի և յղումի: Եթէ զանոնք բոլորն ալ անխառն զլուխզործոցի բախտով չէ երջանկացուցած, գեք բոլորին ալ հազցուցած է ժողովրդական անվերածելի հարազատութիւն: Այդ երգերուն վրայ դրուած եղանակներէն դրու, որոնք հայ արուեստի անկորուստ մէկ փառքը երեւան բերին, անոնց տաղաջափութեան, լեզուին, կշռոյթին, նոյնքան հարազատութիւնը ոչ ոք կրնայ կասկածի ենթարկել: Կոմիտասի երգերը հայ ժողովրդական բանաստեղծութեան զոհարացումներն են՝ այսպէս ըսելու համար»<sup>31</sup>:

## ԳԻՒՂԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՑՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԵՐՈՍԻ ՓՈՐՁՆ ՈՒ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԸ

Վերադառնանք Մաթիկ Մելիքիսաննեան վէպի հիմնահարցերին: Հստէութեան՝ առարկայական եւ ոչ-առարկայացուած ճանաչողութեան քննութիւնն այստեղ անցնում է հեռակայ երկիխօսութեան միջով: Վէպում կայ մէկ գլխաւոր հերոս, եւ նրա շուրջ են ծաւալում ոչ այնքան գործողութիւնները, որքան՝ նրա առիթով գաղափարական հիւսուածք ներմուծուած հեղինակային խորհրդածութիւնները: Վիազական երկիխօսութիւն, իրեւ այդպիսին, գոյութիւն չունի, սակայն ստեղծագործութիւնը ներկայացնում է երկու հայեացք՝ մէկ մեկնութեամբ:

Մաթիկն իրեն «նուիրուած» երկրորդ այս վէպում հայեցողի խաղաղութեամբ երկար է պատրաստւում պայքարի տրամարանութեանը: Սա այն հանգամանքն է, որը ներման ենթակայ չէ հեղինակի համար: Լիակատար պայքարի գիտակցութեանը հերոսը գնում է նոյն համակերպութեամբ, արդէն դատապարտուածի հոգեվիճակով, ինչը որպէս հետեւանք ստորագծուած է աւելի վաղ շարադրուած վէպում՝ բանտարկութիւն ու չարաչար մահ: Եւ խնդիրը նրա նահատակութեան օրինակը չէր: Հերոսը փակուղու առջեւ է «էն գլխից», ինչպէս արեւմտահայութեան փրկութեան համահայկական ծրագիրը, որի անիրագործելիու-

թիւնը սկզբում առթում է սկզբունքային վէճեր, իսկ յետոյ յանգեցնում յուսահատութեան:

Օշականը հետեւղականօրէն ժխտում է Մելիքխանեանցի դատողութիւնների գոյութեան իրաւունքը, բայց ոչ թէ Մարմարնըքի սրճարանում կամ դէպի կովարծ Ակոյի քարայր-թաքատոցի երկար ու ձիգ ճանապարհին, թէկուզ բուն քարայրում, որը քարժարանի կերպ ունի պատանի ուսուցչի համար: Վերջինս (այստեղ վիպականը եւ կենսագրականը միահիւսուած են թւում) երկու շարաթ լոււմ էր Մաթիկի կովկասեան ու մոսկովիան փորձով հարուստ «Ճրիավարժ» դասախոսութիւնները: Շատ աւելի ուշ, մինչեւ 40ականների սկզբի յնտաղարձ գնահատութիւնների ծիրում, կիպրոսի եւ Երուսաղէմի բովով անցած երբեմնի ուսուցիչ-հեղինակը փաստարկուած ու հիմնաւոր պատասխանում էր Մաթիկի ազգային եւ վերազգային գրեթէ փանջունիական «դատողութիւններին»՝ ներքին սրուած համոզումով: Սակայն վիպական գործողութիւնների ժամանակ նա ընդամէնը մէկ տարի էր՝ ինչ վերադարձել էր Արմաշի դպրեվանքից, հետեւաբար, լսելու, իւրացնելու շատ բան ունէր: Կովկասահայ յեղափոխականը նրա համար ազգախնդիր պատուհան էր, գաղափարական հոսքերի բաց շտեմարան՝ ընկալունակ իր ուղեղի համար, այն, ինչ չէին հասցրել սովորեցնել իրեն դպրեվանքի ուսուցիչները:

Բանավիճային հակադրական ոճով Օշականը լաւագոյնս բացում է հայարնակ եւ արեւմտահայ գիւղերի բարքագրական համայնապատկերը՝ ընկերային թշուառութեան, թուրքական անագորոյն լժի, ազգային ճնշումների, երկշերտ հարկային կեղեքումների ընդհանուր խորքի վրայ: Ընդ որում՝ Օշականին ուղեկցում է հենց այն, ինչն առանձնացնում էր Յովհաննէս Թումանեանին (1869-1923): «Դրամի բացարձակ պակասը (չափազանցութիւն չէ ասիկա, նիրական ներութիւնը հասած էր անհայտալի աստիճանի մը...): Ուսկիի վերածուղ միակ բերքը խոզակը, անհնար էր վաճառել առանց հարկահանին արտօնող կնիքին, որ հոմանիշ էր տուրքերուն բազմասիսակ գումարին նախօրօք գանձումին... Տասանորդին տուրքը ուղիղ չարաշահութիւնն էր անձնաւորուած, զանձող պաշտօնեաներուն... միջոցներով, որոնք միջին դարն իսկ կը գերազանցեին իրենց անմարդկային պայմաններուն»<sup>32</sup>: Նրա սուր տեսանկիւնով՝ «Ահաւոր մարդ մըն էր գեղին ներքին ծախքերուն հաւաքիչը, ընտրուած յորովայնէ սրիկայի մը, որուն խժդութիւնները կը հաւասարէին բուրք հարկահանին ընդունին վայրագութեան, երբեմն-երբեմն զայն ալ գերազանցելով»<sup>33</sup>: Դրուագային անանուն նկարագիրը հասնում է գեղարուեստական կերպարի զարմանալի խտացումի, ով էլ լինի իր քննութեան հերոսը՝ չարքաշ գիւղացին, որին ինքը իր աշխատանքի բարոյահոգերանութեանը գերի, պատանդ է համարում, թէ անրարոյ հարստահարիչը: Այս պահը յատկապէս ուզում

300 - 2012



հնք ընդգծած լինել, քանի որ գրականութեան պատմաբանները յաճախ շրջանցում են Թումանեան-Օշական ընդհանրական շրջագծերը՝ միշտ հակամարտութեան ելագիծ որսալու տենդի թելադրութեամբ:

Հեռուն չգնանք: Թումանեանի բանաստեղծութեան եւ արձակի տասնեակ էջեր վկայում են ընկերութեան մէջ հակասութիւնների դրսեւորման իրապաշտական քննութեան օրինաչափութիւնները, ուր ազգային-հայրենասիրական ճանաչողութեան շերտերը մնում են ածանցեալ՝ ընկերային անարդարութիւնների լայն համապատկերի դիմաց: Այստեղ մարդու եւ ընկերութեան բախումն է, ուր նիւթի տիրապետութիւնը գերիվեր է մնում ազգային շահից: Այս տիրուր հաստատումով բանաստեղծը եւ Օշականը իրապաշտութեան քննադատական ոգին մերձեցնում են բարքագրութեան ըմբռնումի վարքականոնին, ինչն արդէն բնորոշ է գեղարուեստական միասնական հայեացքին, որը բացառիկ երեւոյթ է երկու գրողների պարագային: Յիշենք արեւելահայ երգ-չի հատու պատկերները «Հառաչանքը» պոէմից, որոնք հիացնում են ընդհանրացումի գօրութեամբ՝

«Ոչ ամօթ ունի ուժնելը, ոչ վախ,  
Վայը եկել է տարեկ տըկարին»<sup>34</sup>.

«Աղքատ մարդիկ ենք, մեր ծորերի մէջ  
Անց ենք կացնում մեր սեւ սեւ օրերը,  
Թէ որքան ենք զորկ, որքան ենք մենք խեղճ,  
Եղ հաստատ զիտի ինքը – միայն Տերը»<sup>35</sup>:

Թումանեանը հացնում է ուրուագծել ու նոյն պահին պատռել «ճոխ» ու բերրի երկրի ուրուապատկերը, որը Օշականի Մարմարնքի՝ «ներկայանալի» Շուէցարիայի արեւելահայ տարբերակն է: Երկու հեղինակների խօսքում գուսազ հեգնանք կայ՝ սոցիալական չարիքը աւելի հզօր ուժ է բնական հարստութիւնների դիմաց՝

«- Ի՞նչիցն է, պապի, այսքան ճիխ երկրում,  
Խնչպէս ասում ես, դժուար էք ապրում,  
Վարձատրութիւն չէ՞ր ստանում հողից,  
Թէ՞ նեղութիւն է զայիս մի տեղից»<sup>36</sup>:

Շահատակութիւնների պատկերը լրացնում են արեւմտահայ «խաչեղբայրների» Լոռուայ գիւղական հարստահարիչները, որոնց տիպարները առանձին նուանում են գառնում ստեղծագործական ընդհանուր աւագանում. ի դէպ, գեղարուեստական զուգադիպութեամբ երկու գրողների մօտ նրանք բազմադէմ են ու անանուն, ինչը մատնացոյց է անում երեւոյթի կեցութեան բերած ընկերային աղէտի անպարագրելի աշխարհագրութիւն՝ այսպէս ամէնուր է՝

«Էստեղ մեզ մօտիկ թաւաղներ ունենք,  
Ամենք, իմացիր, տասը տէր ունենք.

Փորմներն ողողած, փոխկները թողած,  
Կըոները կանթած՝ կրտերը կանգնած:

Մէկին մեր զիւղում մի թիզ հոդ ունի,  
Թըրքս մի ծէրից միս ծէրը կ'ընկնի.  
Ոչ ինքն է վարում, ոչ տալիս մէկին,  
Բուռն է հաւարել զիւղացու հոգին»<sup>37</sup>.

Հնդ որում՝ նոյն այդ ընդհանրական գծերից Օշականի Մաթիկ Մելիքիանեան վէպի մէջ կարելի է առանձնացնել բնութեան պատկերային ընկալումը, ինչը բաւական քիչ է հանդիպում արձակագրի մօտ։ Այն խառնուածքի ու գրական տեսողութեան հետեւանք է, հանգամանք, որ թերեւս նկատել ենք միայն այս երկում։ Դատեցէք հեղինակի այս անակնկալ խոստովանութիւնը. «Այդ գեղին մէջ ես մինակ վարժապետ մը չեմ, այլեւ տառապող, ոռմանթիք բափառական մը»<sup>38</sup>, այսինքն՝ «բանաստեղծ», հետամուտ իր համար նկարագրական խռովիչ պատկերին, որն անգամ Մաթիկին է հմայում, այնքան զգլիի է, վերանձնաւորուած արեւելահայ գունախաղով. «Ամէն քայի տեսարանը կը պարզե նոր նոր կերպարանքներ, անձրեւին բարակ ասեղներովը ճարտարապետուած, ինքնատիպ ու բնայրու, որոնք սկզբնական զանգուածէն կը ծեւեն աս սինաւորումները... Ամէն հասակով։ Մարիկ զանոնք կը նմանցնէ շատ բաներու, - մակաղած հօտի, խառնիխուուն, ո՛րը ոսրի, որն ալ պառկած, շրջուած զանգակներու, որոնք կը տառապին իրենց համրութենէն։ Որսորդ, վարժապետ, հովի կը տպաւորուին սա պատկերաշարքէն»<sup>39</sup>:

Օշականը վերախաղարկում է թումանեանի «Լոռեցի Սաքօ» պոէմի սկզբի եւ Լեւոն Շանթի (1869-1951) «Փիլիսոփաներ» ծրագրային քերթուածի լեռնապատկերների զգայութիւնները։ Միայն թէ այդ փոփոխական-յաջորդական տեսողութիւնը Մաթիկի «շնորհը» չդիտենք, ինչպէս փորձում է հաւաստիացնել ընթերցողներին արձակագիրը, այլ առաջին հերթին՝ իր «բանաստեղծական» ննթակայական սուր զգայութիւնը, «զեղումը»։ Անգամ օտարական Մաթիկը, ներշնչուած բնութիւնից, «...զլուխը ճօճելով կը բարձրանայ իմաստութեան, երբեմն ապշեցուիլ խորութեամբ։ Այնքան իրաւ է, որ ամէն ապրող ինքնիրմով պայմանաւոր փորձառութիւն մըն է»<sup>40</sup>։ Խօսքը բնութեան մէջ ապրողի բանաստեղծական ներշնչանքի գօրութեան մասին է, որը հնարաւորութիւն է տալիս անձեռակերտ կերպարանքներին «ապրողի» փոխարէն որսալու աշխարհի գոյութեան իմաստները, ինչպէս ձեւակերպում էր «փիլիսոփաների» առաքելութիւնը Շանթը<sup>41</sup>։ Օշականի հոգեհարազատութիւնը միայն թումանեանի եւ Շանթի պարագային չէ, այլ բնութեան գեղարուեստական անէացումի խորունկ այն ընկալմանը, որը միաւորում է երեքին մէկ տանիքի տակ։

Դա առաւել նկատելի է ընդհանրական դարձած հրապարակային-վերլուծական ոճային պատումի խորքի վրայ, ուր հեղինակը գնահատում է, մասնաւորում երեւոյթները, վերակազմաւորում գործողութեան ժամանակային ընթացքը ու դրա դիմաց ծաւալում մեկնական խորքը՝ պատմաշակութային հարուստ անդրադարձներով։ Համեմատութիւնների ծիրի մէջ նա ամրողացնում է ազգային մտածողութեան տարրեր հարժութիւններն ու գրական արձագանգները, ներմուծում արեւելահայ ու արեւմտահայ տարրերակիչ շեշտադրութիւններ՝ բարեխառնելով գրական-ընկերային համայնապատկերը։ Նկատենք նաև, որ ոճային բազմազանութեան նման կիրառութեամբ նա այս վէպում կարծես կրկնում է Խաչատուր Աբովեանի (1809-1848) Վէրք Հայաստանի եւ Եղիշէ Զարենցի (1897-1937) Երկիր Նայիրի վէպերի կառուցողական մասնաւտկութիւնները՝ զանգուածային տեսարանները ծառայեցնելով ընկերային-գաղափարական հարցադրումներին, գեղարուեստական ճանաչողութեան ածանցումներին։

## ՕՇԱԿԱՆ-ԱԲՈՎԵԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Յատկապէս Աբովեանի հետ զուգահեռը կերպարի կառուցման իւրայատկութեան որոշակի կնիք ունի. Աղասին ճանաչելի դառնում է դեգերումների ընթացքում, ինչպէս Մաթիկը։ Նրա նպատակային ճամրորդութիւնները առիթ են՝ ցոյց տալու Հայաստանի աշխարհագրական լայն ընդդրկումները, այն նախապատրաստութիւնն ու կոփւները, որոնք մօտեցնելու են երազած ազատազրումը օտարի լծից։ Թուրքիայի մէջ հայկական ճանաչողութեան պարագան աւելի մանրամասների կարօտ է թւում, ինչով էլ բացատրում է նրա երկշարաթեայ կեցութիւնը։ Մարմարնը, հետեւաբար թութանիայի, Նիկոյ շրջանի, Աղարազարի ու պատմական Հայաստանի սահմաններից դուրս տարածքի վրայ նետած ընդհանուր այս հայեցքը, թւում է, ճանաչողական յանձնարարականներ են հերոսի համար։ Օշականը անմիջապէս բացում է փակագծերը. «Այն ատեն ալ, այսինքն Տարօնի «դաշտում», ինչպէս այծարած Ակոյի «քարայրում», պարզ ու մէկ էր եղած իր նպատակը. ՃԱՆՉԱՆԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. Դժուար, դժնդակ գիտութիւնը, զոր կը սորվին իրեն նման, հողին ու ցեխին մէջ պառկելով, ոչ թէ զրասենեակներու հեշտ «մընողորտում»։ Իր անհծակուր զայրը՝ յըը՝ բոլոր անոնց դէմ, որոնք թերթերէն կամ զիրթերէն կը բաւարարուին մեր ժողովուրդը ճանճալու հարցովը»<sup>42</sup>.

Վէրք Հայաստանի վէպի Աղասին զգում է իր ժողովրդին ներքնապէս, մինչդեռ Մաթիկը հայեցող է. տարածութիւն կայ իր ու ժողովրդի միջեւ։ Աղասին շատախօս չէ, վերլուծաբան չէ Մաթիկի պէս, աւելի ներապրումով է լցուած, որը զգացականի ճանապարհով գործնականում հասունացնում է իրեն գործողութիւնների համար։ Նա լինում է տար-

բեր վայրերում, զինավառում ժողովրդին իր օրինակով: Մաթիկը «զինավառում է» միայն հեղինակին, որի սրատես աչքը որսում է հերոսի պերճանքն ու թշուառութիւնը:

«Պերճանքը» երկու ծրագրային հերոսների համար կեանքը ժողովրդին նուիրաբերելու վճռականութիւնն է: Տարբեր են, սակայն, մեկնակէտերը. համալսարանում ուսանած Մաթիկը եւ տարերային, անուսում Աղասին ընկալման տարբեր բարդոյթներ ունեն: Ընդհանրականը թերեւ երկուսի դէպքում էլ ուռւական վստահելիութեան գործօնն է, տարբերակիչը՝ ազատագրական պայքարի կազմակերպման եղանակների ընտրութիւնը: Արովեանի մօտ տարերայնութիւնը օգնում է հերոսին իսկապէս հերոսանալու: Նրա պայքարը միահիւսուում է ուռւական ռազմավարական ծրագրի հաւաքական իրագործումներին:

«Թշուառութիւնը» նոյնպէս տիպարանական յատկանիշներ ունի. Մաթիկը միայնակ է. գործում է անհատապէս թէ կենտրոնի ցուցումներով՝ որոշակի չէ: Թերեւ միայն վիպական վերջին հատուածներում մենք տեսնում ենք ծրագրային փոփոխութիւնների պահանջ, հերոսի եւ կենտրոնի, հերոսի եւ ժողովրդի յարաբերութիւնների միջեւ վիճի առկայութիւն, ինչը խորացնում է Մաթիկի մեկուսացումը, անհատապաշտ մղումները: Որքան նա ճանաչում է ժողովրդին, այնքան նրանից հեռացումը դառնում է ճակատագրականօրէն գիտակից ընկալում, միայնութեան ողբերգականութիւնը՝ բազմաթիւ ինքնահալած հարցումների, որոնումի ճիգ, որի հասողութիւնը անցեալի ու ներկայի հանգույցներում ուրուագծում են երկուսով, այսինքն՝ հեղինակի մեկնիչ աջակցութեամբ: Մինչդեռ Աղասին լուծւում է ժողովրդի մէջ: Կարելի է ասել, պտղակալել է իր մեծ սէրը, նպատակին ծառայում է լիաբուռն:

Ընդ որում՝ նկատելի է, որ Արովեանի հերոսին եւ ընկ. Մաթիկին գիւղերի սոցիալական դառը նկարագիրը անտարբեր է ձգել. նրանց խանդավառում է ազգային զարթօնքը, բայց՝ տարբեր բովանդակութեամբ, այն, ինչ ոգեւորութեան պահին Մաթիկը կոչում է «մարդոց սրբազնազոյն իրաւունք»<sup>43</sup>, այսինքն՝ ազատութեան խորհուրդ, ինչի համար հեղինակը նրան յաճախ հեգնախառն կոչում էր նաեւ «յորդող տրիբուն»: Աղասին, վերյիշենք, տրիբուն չէ. գործի մարդն է:

Երկու վէպերի կառուցուածքային համադրական եղանակներից մէկը զիսաւոր կերպարի շուրջ գրուագային կերպարների ներհիւսումն է՝ իրադարձութիւնների, այս կամ այն մանրամասների գաղափարական լուսաբանման առիթներով: Դրան պիտի գումարել կերպարների շնորհիւ աշխարհագրական եւ պատմական լայն համապատկեր կառուցելու շնորհը, որը վիպական յատկանիշ է նաեւ Օշականի համար: Արեւելահայ վիպասանի մօտ պատմական գունեղութեամբ, առասպելի շաղախով, բայց ոչ գրական կերպարի շնչառութեամբ են գծուած յայտնի պատամբներ Յովակիմ թումանեանը, Արծափեցի Մանուկը, Գրիգոր

Եպիսկոպոսը, զուտ քաղաքական գնահատականով է առանձնանում Վալերիան Մադաֆովը, որի առիթով արովեանագէտները միահամուռ գտնում են, թէ պատմական անձը գրեթէ չի իջել վիպական տարածք։ Արովեանի գրիշը գեղարուեստական գերակայ նկարագրով անմիջական վերհանում է Աղասու շրջապատը՝ մօրը, կնոջը, մարտական զինուած ընկերներից՝ Մուսային, Կարոյին, խղղարաքիլիսեցի Հայր ու որդի Սարդոյին ու Վարդանին, Նրանց դիմաց կանգնած «արինակեր» Հասան խանին՝ Երեւանի խանութիւնից։ Տպաւորիչ է Վարդանի մահը՝ կասկածի, թշնամուն յանձնուելու այսրոպէական մտմտումներից մինչեւ հերոսացումի գեղարուեստական գիւտը՝ հակադրութիւնների սուր յաջորդականութեան մատուցման եղանակով։ Զմոռանանք, որ հերոսն այնքան սիրելի է եղել հեղինակին, որ վէպը գրելու տարին ծնուած տղային կոչել է հենց Վարդան։ Աղասու ջոկատի տղաների վարքագիծը օգնում է ազատագրական կոուի համահայկական բնոյթը ցոլացնելու։ Անի, Ապարան, Պառնի, յատկապէս՝ Երեւան եւ Խղղարաքիլիսա։

Նիւթը կառուցելու նմանատիպ եղանակը բնութագրում է նաև Օշականին։ Միայն մի էական տարբերութեամբ։ Արովեանը յուզական զգալի միջամտութիւն ունի, բայց կարծես՝ վարագոյրից այն կողմ, իսկ Օշականը վէպում գործող անձ է, յաճախ չգիտենք՝ ով է գերիշխում։ Երբեմն թւում է՝ հեղինակն աւելի է նկատելի, քան Մաթիկը, այնքան խմացական վերլուծական է նրա ներկայութիւնը։ Դրան գումարենք, որ Մաթիկի վարքագիծն ու հայեացքը բացւում են հեղինակի շնորհիւ, ենթարկում վերատեսութեան, յաճախ՝ սուր քննադատութեան։ Անտեսելու չէ, որ Մաթիկի «Քայլարշաւը» Բութանիայում, Իզմիրում, Ադաբազարում, Տարօնում, Վասպուրականում, Կիլիկիայում եւ այլուր<sup>44</sup>, ուղիղ իմաստով ստորադասուած է հեղինակ-հերոսի ծանրանիստ ու ծանրամարս դատողութիւններին ու դրանցից հետեւցրած պատմահայրենասիրական, ազգային-քաղաքական, հոգեւոր-եկեղեցական եւ տեղագրական-ճանաչողական բազմաշերտ, տեղ տեղ մանուածապատ ընկալումներին, որոնք յաճախ յոգնեցնում են ընթերցողի գրական աչքը, ինչը, ի դէպ, բնորոշ է նաև Արովեանի բնագրին։

Աւելորդ չէ յիշեցնել, որ Օշականի վէպի արեւելահայ հերոսը լեռներգու թումանեանի մէկ քերթուածի, Միխայիլ Լերմոնտովի (1814-1841) «Կովկաս»ի կարգին՝ ոգեշնչուած է նաև Արովեանի «Երեւանու բերդով»<sup>45</sup>։

Երբ Օշականին այս եւ այն թեւերում մեղադրում են արեւելահայ գրականութեան հանդէպ աչառու դնահատականների առիթով (դեռ «աշակերտ» Վազգէն Շուշանեանից<sup>46</sup> սկսած), կ'ուզէինք հրամցնել Արովեանի վէպի մասին գրականութեան պատմաբանի բարձր, ազնիւ եւ պատմական տեսակէտից արդարամիտ մեկնակէտը՝ որպէս, իր գնահատութեամբ, «Ճշմարիտ գլուխգործոց»։ Նորութիւն էր Վէրք Հայաստա-

նին նրա աչքին՝ իբրեւ ողի, ձգտում, արուեստի ըմբռնում եւ մանաւանդ լեզուական անջրպետի գրաւում։ Նրա գիտական խնդիրն է «նուաճել հայածականի խոշոր հոգին», որը թիավարում է «այրող բոլոր հոսանքներուն» դէմ<sup>47</sup>։ Իր բառերն են։ Ի՞րն է եւ եզրակացութիւնը։ «Քիչ մը ծանրացայ այդ [Վերը Հայաստանի] գործին վրայ, վասնզի արեւելահայ աշխարհաբարին առաջին կորողը ըլլալուն շափ է նաև քարձոր հոգերանութիւն, հայրենասէր զգայնութիւն՝ իրեւ տարափ մը իրմէ եւոր ուրիշներ իր ճամրով պիտի քալեն, հետզինտէ զտելով յորդ ու բիրտ այդ տաղանդին առաւելազանց տուրքերը։ Հայ վեալին նախահայրն է անիկա»<sup>48</sup>։

## ՕՇԱԿԱՆ-ՄՈՒՐԱՑԱՆ-ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Օշականի ստեղծագործական ենթաժանրի շերտերում հարկ է հերոսի վարքագծից բխող սկզբունքի մէջ որոնել վէպի գեղարուեստական քննութեան երգիծական եղանակի հիմնաւորումը։ Սխալ եւ միամտութեան վկայութիւն կարելի է համարել հերոսի վարքագծի նման ընտրութեան կապը գրողի աշխարհաճանաչողութեան ընդհանուր տարրի հետ, եթէ նկատի ունենանք զուտ մէկ անհատի պարագան։ Մինչդեռ Մաթիկը անհատի դիմագծից աւելի գաղափար է, նա կազմում է ընկերային-քաղաքական ակնբախ հոսանք՝ ազգային մտածողութեան զարգացումներում, որը արժանի է, ըստ հեղինակի, հետեւողական ծաղրի՝ սկսած փառաբանուած «մօրուք»ից մինչեւ շատախօսութիւն ու դատարկախօսութիւն, մինչեւ ազգային նոր երեւոյթների ընկալման մակերեսայնութիւն, մինչեւ ճանաչումի ձգտումին անյարիր պարզունակ վարքագիծ։

Այստեղից է բխում անհատի երգիծական սուր ընդգրկումների կապը ընկերային-քաղաքական «առաքեալներ»ի գործունէութեան յատակագծի հետ, որ տարբեր գեղարուեստական յանձնառութիւններով կիրառել են Մուրացանը (1854-1908) եւ Օշականը իրենց ծրագրային վէպերում։ Մաթիկը Մուրացանի Առաքեալը վէպի հերոս Պետրոս Կամսարեանի պէս «առաքեալ» է, եղել է, ըստ էութեան, մոսկովեան կեանքի նոյն բոհէմում, զարմանալի զուգադիպութեամբ հենց նոյն 1900ականների սկզբին կամ մի փոքր աւելի վաղ։ Գուցէ եւ իրեն քաջածանօթ ճեմարանի նոյն սանն է բորբոքել մաշուած, բայց միշտ նորոգ սրբազան պարտքի պատգամը, որ վերբերել է արեւելահայ արձակագիրը՝ «Նուիրուել ... հասարակաց քարոյն, ժողովրդին ու հայրենիքին»<sup>49</sup> պատգամից։

Ճառերը՝ ճառեր, կեանքը՝ կեանք։ Ճառասացութիւնը, ճարտասանական հարուստ ներկապնակը իսկապէս ընութագրում են կամսարեանին եւ Մելիքսանեանին։ Դեռ Պետրոսին, թւում է, կարելի է ներել գիւղը եւ գիւղացուն չճանաչելու մէջ, երբ Մոսկուայում վերցնում է հունգարական թամբ զրոսանքների համար եւ որսորդական կամ մեղուա-

բուժական գրքեր, որոնցով իրը իր կարելին պիտի բերէր գիւղացուն երեկոյեան կամ գիշերային անվերջանալի զրոյցների ընթացքում։ Ապա ինչ ասել նոյն կարգի ռոմանտիկ մտածումների համար Օշականի հերոսին, որին եւս մատում են նման սնափառ դատողութիւնները։ Նրա երեւակայութեան բարձրաթռիչ չափումով՝ «...յեղափոխականը «զինելու է» եւ տնտեսագէտ, ազրոնոմ, ու պիտի հետարքը գործունեութեան իր շրջանին բերքով, հողերու պարարտացմանը, բարեփոխութեամբ։ Ու համաձայն այդ տեսութեանց, մօտիկ «ապագայում» սա թշուառական աւանը<sup>50</sup> սահմանուած է ըլլալու մի մեծ ինտուսքրիէլ կենտրոն, քանի կան սա քարերը, որոնց մարմարը ոչ միայն կը բաւարձ ամբողջ Թուքրիոյ քանդակագործական եւ ճարտարապետական կարիքները, այլև կը ջախջախէ Յունաստանը, Խոպլիան, երբ արտածուի»<sup>51</sup>։ Զի ուշանում նուրբ հեգնանքը՝ թաքնուած ամենիմաստ գիտութեան ու միշտ ծառայութեան պատրաստակամ անսքող սնապարծութեան տակ։ «Յեղափոխականը նոյն ատեն բնական գիտութիւններու ուսուցիչ ալ է, կրային նարզերու մէջ երկրաբանական յեղաշրջումներու փաստերը արժեւորելու ընդունակ։ Ու է հողագէտ։ Ու է բժիշկ՝ վիրաւորներու դարմանումին համար տեղական բոյսերու լիակատար օգտագործմանը մը։ Ու ի՞նչ չէ յեղափոխականը սա մարմարեղէն ամայքներուն մէջ, սա պատիկ պտոյտին ընթացքին»<sup>52</sup>։

Հերոսի նոյն հիացումը շատ աւելի ուշ բացւում է Կարինի «ուղղութեամբ», որը ոգեւորութեան պահին կոչում է, ոչ առանց հեղինակի համակրական շնչի, «Արեւելքի Շուեցարիան»<sup>53</sup>, ուր կարելի է երկաթուղի գցել<sup>54</sup>, ինչը եւրոպական «տեսքի» նախանշան պիտի լինի։ Մաթիկի ռոմանահիկան իրականում քաղաքական սնանկութեան ողբերգական ծնունդ է, մինչդեռ Կամսարեանի երեւակայութեան առջեւ անհատի փառագոչ երազայնութիւնն է։ Բայց նրանց մօտ ընդհանրական է խորշանքը գիւղական ապրելակերպից, ուրեմն եւ՝ ժողովրդի հետ կեցութեան անհաղորդութեան նախապայմանը։ Էլ ուր մնաց Մաթիկի «յեղափոխական սիրոյ» թովիչ հոգեկցութիւնը կեղտի մէջ կքած գիւղացու հետ։ «Մեր տրիբունը շարունակ կը գոցէ, կը ճնոտ ունացերը ու կը ջանայ զապել հազը՝ հետեւանը զարշահոտութեան կճոններուն։ Նեղուած է մէզին ու քակորին, սատակ կատուններու, հաւերու, շուններու բազմախառնուրդ բազմարուրումներէն (Մեծարենց պէտք էր տեսած ըլլար սա պատկերները), ուր իրենց առջեները կը նետեն փողոցներուն վրայ բացուղ կոյուղիները»<sup>55</sup>։ Նախ, Միսաք Մեծարենցի (1886-1906) գրուագը մատնացոյց է անում բնապաշտութեան անէացման բանաստեղծական տաղտուկը, եթէ ընկերային թշուառութեան գիտարկումը պարզապէս շրջանցուած է։ Դա արձագանգւում է նաեւ Օշականի Մինչեւ Ռուր գրամայում։ Իսկ ահա Մուրացանի Կամսարեանի հետ զուգահեռում ընդհանրական են նաեւ կեղտի մէջ կորած գիւղից (գիւղերից)

**Մաթիկի անընդհատ փախուստները, խուսանաւումները, ինքն իրեն այդպէս էլ չգտնելը:**

Այս երկու ճարտասանների ընկալումների հետեւութիւններն են միայն տարբեր. Պետրոսը վերադառնում է փափկակենցաղ կեանքին, իսկ փակուղի մտած Մաթիկը ընտրում է թուացեալ պատուարժան մահը, սա արդէն վիպական սիւժէտային գծից դուրս: Երկուսն էլ գիտեն գործել ու խանդավառել, բայց՝ «չափի» թելազրութեամբ: Երկուսին ընորոշ է հաւատը, միայն թէ Մաթիկը իր հիասթափութիւնների պատանդն ու գոհն է՝ աւելի ծայրային վիճակներում, քան Պետրոսը, որի «առաքելական» փառասիրութիւնը անձից այն կողմ չէ:

### **ՕՇԱԿԱՆԻ ՎԵՊԻ ԴՐՈՒԱԳԱՑԻՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՇՈՒԽՉ**

Ինչ վերաբերում է Օշականի վէպի դրուագային հերոսներին, ապա պէտք է ընդգծել նրանց յարաբերական ինքնուրոյնութիւնը. ճիշդ է, նրանք «պատւում են» Մաթիկի եւ հեղինակ-հերոսի շուրջ, բայց չեն բխում կերպարի լրացուցիչ մեկնութեան անհրաժեշտութիւնից, կազմում են «երկրորդական» միջավայր եւ «դեկոր»՝ մանրամասնի ներկայացման ժամանակ: Դրուագային կերպարները կարծես «խանդարում են» Մաթիկին, նրանք հերոսի յեղափոխական գործի հանդէպ բուռն սիրուց խամրում են, երկրորդական դառնում նաեւ ապրուած խանդի «վառվուռն» վերաբերմունքով:

Երկրորդական կերպարների հասցէին Մաթիկն ու հեղինակը գտնում են «կատարեալ մասսա» արտայայտութիւնը: Առաջինի մօտ խոր ու անթաքոյց դժգոհանք կար. չէր սիրում, որ ընդհատում էին իրեն: «Մասսան» անպատրաստ խառնամբոխ էր. «Քիչ [եին] եւ յատուկ անունները յեղափոխական պետերէ իր խօսածին մէջ (աւելի յետոյ պիտի իմանայի այս կծծիութեան զսպանակը, որ խորունկ նախանձ մըն էր խկապէս ծողովրդական գործիներէն)»<sup>56</sup>: «Մասսայի» նկատմամբ իր վերաբերմունքը միայն գործչի փարքազիծ չէր, այլ նաեւ «քժկի» եւ «սոցիոլոկի» վերամբարձ պաշտօն, որը սիրում էր ընդգծել: Վերից ուղղուած մեծամտական մօտեցումի թիրախն է նաեւ նիւթը խորաքնին վերլուծութեան ենթարկող ուսուցիչը. «Զղջացած է զիս նտիկ ընելուն: Յայտնապէս կը տառապի ան, վասնզի հեռու կը գտնէ ինքանքը ծողովորդէն»<sup>57</sup>: Մելիքիսաննեանցին տրուած այս ընութագիրը յատկանշական է ներքին ճանաչողութեան տեսանկիւնից, որն աւելին է, քան իր ժողովրդին ճանաչելու բնարուխ<sup>58</sup>, բայց կոյր ձգտումը, որ ունի երգիծական մեր հերոսը: Նրան թւում է, թէ արդէն ճանաչում է ժողովրդական զանգուածը, որին ինչքան առերեւոյթ մօտենալու քայլեր է անում, այնքան իրապէս հեռանում է:

Նկատենք այստեղ մի ուրիշ հանգամանք, որը հեղինակը հետեւողականօրէն ձգտել է շրջանցել, բայց «այս անգամ» կարծես մի փոքր չի

ստացուել. դա Մաթիկի վերաբերմունքն է ուսուցիչ-Հեղինակի նկատմամբ, դա «վերէն»՝ մոսկովեան համալսարանական բարձունքից, յեղափոխական առաջնայնութեան դիրքերից նետուած հայեացքն է «գիւղական սահմանափակ» ուսուցչին, որին «մտիկ ընկլր», իր մեկնութեամբ, անիմաստ է: Հերոսի շատախօսութիւնը վերաբերմունք է հենց Հեղինակի հանդէպ, իւրատեսակ դպրոց, որի խոնարհ աշակերտն է իր դերով դեռ պատանի ուսուցիչը: Հետաքրքիր է, որ Հեղինակը սիրով կլում է վիպական խայծը՝ «դիրքաւորուելով» երկրորդ դէմքի համար յատկացուած անսովոր ընագծում: Ոճական իւրայատկութիւնն այն է, որ Մաթիկի շատախօսութեանը վէպում քիչ է տեղ արւում, մինչդեռ նրա վերլուծութիւնների ու մեկնութիւնների Հեղինակային վերաշարադրումները շուայլ են, անափ՝ վիպական լուսանցքում, լեցուն՝ ենթաբնագրով: Հերոսն ու Հեղինակը առաջին ու երկրորդ տեղերը փոխելիս կարծես մնում են առերեւոյթ հակասութեան, բախումի շրջագծում: Սա նիւթը կառուցելու վարպետ եղանակ է, որին տիրապետում է Օշականը՝ հազուագիւտ ներկառոյց հայ գրականութեան մէջ:

Անդրադառնալով Մաթիկի եւ ժողովրդի հանդիպումներին, այն կարելի է եւ պէտք է յարաբերական, պայմանական դիտել. նրա համար Բութանիայի ժողովրդական պատկերը կազմում են գիւղական «սրճարանի յաճախորդները», որոնք, իր գծած արտայայտութեամբ, Դանթէի (1265-1321) տառապանքի, «խորհուրդի» կրողներ էին: Բայց, եզրայանգում է արծակագիրը, նրանք չեն գործողութիւնների խթանիչը, նրանք միայն խորք են, նրանց բնութագրումը «պէտք է ձգել... այսպէս կիսատ, ծերերը այսպէս ուրուազիծ, ամէն մէկուն մէջ [պէտք է ձգել] ապառաժի պէս յատակ յօրինած ողբերգութիւնը ապրումին ու քալել, որպէսզի քայլ վէպն ար»<sup>59</sup>: Հեղինակի համար դա մշակուած ոճապատում է: Այդպիսին է նաեւ «Թուրքմէնին Աղջիկը» պատմուածքի կառուցման եղանակը, ուր նոյն ծերերն են՝ որպէս անփոփոխ ետնաբեմ, գրեթէ առանց դերակատարութեան:

Վիպական տարբեր հատուածներից մենք կարող ենք առաջինը վերբերել իր շիտակ հարցումներով կովարծ թաթոսին, «ընդդիմադիր» ջուրեպան, պարտիզակցի Մինասին, որոնցից, բնական է, դժգոհ է Մաթիկը: Գրեթէ մուրացանեան շնչով կազմուած այս պատկերներում ցուցադրական փնթփնթոցը, ըստ էութեան, ժողովրդից յեղափոխականի «փախուստի» բնականութեան վկայութիւն է, էլ ուր մնաց խօսենք նրա սիրուց կամ անհանգստութիւնից<sup>60</sup>: Կարելի է յիշել նաեւ հարկահաւաք ծաղկատար պաշտօնեային, որից բոլորը սարսափում էին, քաղցրիկ, լեզուանուշ չորպաճի կարապետին, որ միշտ ապշեցնում էր թուրքերի հետ շփումներում, կապերում ցուցաբերած անսպասելի յաջողակ լուծումներով, արմաշական շրջանաւարտ թաթուլ Մայրագոյն Վարդապետին, որը հրաշալի տիրապետում էր ճամբորդական գրականութեա-

նը, մասնաւորապէս Պոլսի մասին գրքերի բովանդակութիւնը իւրացրել էր, բիւրեղացրել անձնական խորաշերտ զգացումով: Եւ վերջապէս ընկ-Սեղօն, որի հետ «բաժնեց» ժողովուրդ ճանաչելու հմտութիւնը, Ակոյի քարայրից յետոյ մէկամսեայ դեգերումները, մատնութիւնը, կամովին յանձնուելը թշնամուն Աղարազար-Արմաշ ճանապարհին, որպէսզի թուրքը ուրիշներին իրենց պատճառով չշարունակի խոշտանգել, եւ վերջապէս, նահատակութիւնը Մոխիրնոցին մէջ:

Սեղմ տողերի մէջ հեղինակը տալիս է հերոս յեղափոխականի գործունէութեան տարակուսելի իմաստները եւ սթափ գնահատութեան ամփոփումը. ի՞նչ շահեցին մաթիկները ժողովրդական «անվերջ ճանաչումի» փորձերից, ի՞նչ շահեց ժողովուրդը նրանց նուիրումի անկեղծ, սակայն անհանգրուան զոհաբերումի սեղաններից: Մաթիկները մեծ կամ փոքր հերոսներ էին, «որոնք իրենց անձին ամրողը որին»: Եւ հեղինակի նորատիպ հարցումը. մաթիկները՝ «...Յիմա՞ր, քանի որ իմաստուն չէին ծնած, քայց ազգին հանար մեռնելու պահին մեծերուն շափ մեծ եղան:

Մաթիկները:

Կը հարցնեմ ու կը լոեմ»<sup>61</sup>:

Պատախանը «չոր» է ու թերեւս աննպաստ «մեզ» Համար. մաթիկների ճանապարհը փակուղիների գորդեան հանգոյց է, ուր լուծումը աներեւոյթ է արձակագրի տեսադաշտում: «Գրականութեան Համար» ծրագրային ուսումնասիրութեան մէջ, գրուած 1929ին, տպագրուած Հրանդ Բալուեանի (1904-1967) Զուարթնոց հանդէսում, վէպի վրայ աշխատելու շրջանում, նա մատնացոյց է անում իրենց կողմերում դարասկզբին երեւցած ուրիշ «Մաթիկի» (մաթիկների տիպարանական գուտ նշանը՝ գուտ ստեղծագործական հակումներով, մի՛շտ փառարանական մեծութեան ու «հանճարութեան» կարօտ, բայց՝ կատարեալ միջակութիւն, որի մէջ գրական երէցները պատրաստակամ էին «առնուազն տաղանդ մը ողջունելու»: «Պատահեցայ տղոց, որոնք իրենց փորձերը ինձի դրկած ատեն, կտրուած գովեստներ ալ փոյթ ունեցած էին ներփակելու գիրքին մէջ՝ ստորագրուած ջոջ քննադատներէ: Այէտք հոն է, որ այսպէս շփացուած այս տղաքը պիտի շարունակեն նուազագոյն տարը տարի տառապիլ քաւելու հանար այդ գովեստներուն աւերը:- Քննադատը չի բապաղում բերել արեւելահայ գրողի տիտուր օրինակը.- Անոնցմէ մէկը, որ Կովկասէն կը բերէր իր վկայականները, եւ որուն հանդիպումը ըրի տասը տարի առաջ Պոլսոյ գիտերէն մէկուն մէջ, դեռ չէ նոոցած այդ գովեստներուն շաքարը եւ Յունաստանի մէջ կը շարունակէ գրել ու գրել, անօրի ու ծարաւ, երբ կրնար շատ լաւ խանութ մը կառավարել ու գոնէ կուշտ ապրիլ»<sup>62</sup>: Իսկ եւ իսկ նոր Մաթիկ. եթէ առաջինը շաղակրատ էր, այս մէկը գրամոլ է: Երեւոյթի մասին նա արդէն լայն կարկինով վկայելու էր Մաթիկ Մելիք-

խանեան վէպում: «Յեղափոխական մարիկները, զեթ անոր դպրոցին խլեակները,- իր խակ կենսափորձում հաստատում է երեւոյթի ընդհանրացման իր միտումը վիպասանը,- Սփիտքի շատ մը հայաշատ կեղրոններուն վրայ կ'ապրին տակախն: Ես հանդիպած եմ անոնց Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ: Ու նոյնն էին բոլորն ալ, իրաւ է թէ գահազորկ արքաներու նման աղօտափայլ»<sup>83</sup>:

Վիպական այսօրինակ հերոսների գործի փառարանութիւնն ու լուսապսակ նահատակութիւնը հայ գրականութեան մէջ ակամայ դարձել է սեւեռուն նպատակ: Օշականի իրական դժգոհութիւնն այստեղ է. մի կողմից Մաթիկը «մեր ժամանակի հերոսն Ե», միւս դարձերեսին՝ «աւելորդ մարդը»: Առաջին «դէպքի» համար հեղինակը ծաղրի նորանոր մեթոդներ է ընտրում, «երկրորդի» պարագային՝ կարեկցում է, ընդունում, որ նրա նուիրումը կասկած չի յարուցում, անմիջական է, սրտառուչ: Մաթիկի «Հերոսութեան» եւ «աւելորդութեան» զուգընթաց խաղարկումները ապահովում են կերպարի քննութեան ամբողջականութեան պատրանք:

## ՕՇԱԿԱՆ-ԴՈՍՏՈԵՒԽԱԿԻ. ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԸ

Վերլուծական նման հնարանքը ածանցւում է Ֆէոդոր Դոստոեվսկուց (1821-1881): Մեր կարծիքով, վերջինիս Besii (Այսահարը) վէպում, իրեւ քննութեան եղանակ, ընկած է ընկերային նոր՝ «մութ ու լոյս» ճանապարհի (այսինքն՝ եւրոպական թէ պահպանողական) ընտրութեան նպատակային սկզբունքը, ուր ոռու հանճարը հաւատ չի ընծայում արեւմտամէտ մղումներին, եւ որոնց նկատմամբ անհանդուրժող էր առաւել եւս արտասահմանում եղած տարիներին՝ 1867-1871ին: Ճիշդ է նկատում Օշականը, որ ոռու ընկերութեան մէջ «...Մարքսիզմ ու Թուլսբոյիզմ, ասոնք հակադրութիւններ չեն 1880ին, այլ օրուան հօրուագոյն կիրքեր: Ու Տայսրուեսկի մինակ ոճիրին տեսարանը չէ, այլ աշխարհը փրկելու նոր Քրիստոս մը ուզող մարգարէ մը»<sup>84</sup>: Նա որսացել է ընկերային կրքերի բուն յորժանքը, որտեղ Լեւ Տոլստոյը (1828-1910) եւ Դոստոեվսկին աշխարհը յեղափոխականներից ազատելու համար «Քրիստոս մը» վերքերելու դաշնութիւն են կնքել: Եւ ինքը միանում է նրանց:

Օշականը գիտում է նկատում կերպարի ընտրութեան մէջ Դոստոեվսկու նորարարութիւնը, որը ճանաչողական անցումի հրաշալի օրենակ է առհասարակ ոռու գրականութեան գեղարուեստական տարածքներում<sup>85</sup>:

Դոստոեվսկին, հետեւղականօրէն երգիծում էր իր հերոսին՝ Պետրուշա Վերխովենսկուն, որի նախատիպերից մէկը մոսկովեան նշանաւոր պատմաբան-արեւմտամէտ, տրիբուն Տիմոֆէյ Գրանովսկին (1813-1855) էր՝ «ժողովրդական վրիժառութիւն» շարժման նիհիլիստ առաջ-

Նորդ Սերգէյ Նեչաեւի (1847-1882) կողքին: Զմոռանանք, որ Այսահարի սեւագրութիւններում հերոս Վերխովենսկուն հեղինակն ուղղակի կոչում էր «Գր-», այսինքն՝ Գրանովսկի: Զմոռանանք մի ուրիշ՝ «անձնական» կարգի հանդամանք՝ այս անդամ ահաբեկից Նեչաեւի առիթով, որն իր համար երկրորդական չէր. այն մօր աղջկական ազգանունն էր:

Ի դէպ, Գրանովսկին ժամանակին ազատամտական գաղափարներով հմայել էր նաև Նալբանդեանին, ինչի մասին գիտական-գննական խորքով արտայայտուել է Հեղէցը Եւ Նորա ժամանակը գրառումներում (1863) արդէն Պետրոպավլովեան բանտի տաղտուկը յաղթահարելիս: Անտեսելու չէ, որ հայ յեղափոխական-դեմոկրատի արխիւում պահպանուել են Գրանովսկու՝ Մոսկուայի Համալսարանում տպագրուած աշխատասիրութիւնները՝ Գէորգ Հեղէլի թարգմանական գրքերի կողքին:

Դոստոեվսկին Օշականի համար ակամայ դարձել է կերպարաստեղծ եղանակի «յուշարար»: Վերադառնանք, սակայն, երկուսի այն գուգահեռներին, որոնք գալիս են ընդդեկու յեղափոխութեան հանդէպ նրանց ոչ միայն բացասական ընդհանրական դիրքորոշումը, այլ նաև ստեղծագործական քննութեան արմատական տարրերութիւնը, ինչը խօսում է այդ երկերի ինքնուրոյն կառոյցի մասին: Ռուս մեծագոյն մտածողը կանխազգում է յեղափոխութեան հետեւանքները<sup>88</sup> դեռ շարժման արշալոյին, խանձարուրի մէջ, իսկ հայ բարքագիրը յետահայեաց ծանրախոհութեամբ կարծես ամփոփում է երեւոյթի ազգային ողբերգական հետեւութիւնների լրջանակը՝ իրեւ համաժողովրդական գերագոյն դաս հայ պատմութեան տողանցքի վրայ՝ ընդհանուր եզրագծի բերելով ազգային-քաղաքական ու այդ քաղաքականին ուղղութիւն հաղորդած, մշակութային ծանր բանուածք դարձած մտածութեան ծալքերը:

Երկու գրողները կազմում են վէպի գործողութեան եւ սոցիալ-«յեղափոխական» շարժման «ժամանակագրութիւնը». ուուս վիպասանի համար այն ներկայանում է իրրեւ ուրուագիծ, իսկ հայ գրողը կազմում է անցեալ դարասկզբի իրադարձութիւնների յետահայեաց վաւերականութիւնը՝ տարբեգիրի չէզոք ու բարեխիղճ մօտեցումով, ելնելով ազգային պատմական ողբերգական խորքի փորձառութիւնից:

Կայ մի ուրիշ էական տարրերութիւն երկու մտածողների վէպերի հրապարակագրական պաթոսի եւ նպատակադրման մէջ. Դոստոեվսկու «հակայեղափոխական» վէպը, ըստ էութեան, զգուշացում է պատմական խորհրդի մէջ աւանդական իւրայատկութիւնը («ուուսական ուղին») պաշտպանելու ճանապարհին: Օշականի մօտ «զգուշացումը» այլիւս յապաղած է. մաթիկները, ընկ- փանջունիները, յեղափոխութեան «գեղարուետական» նուիրեալները, նրա տպաւորութեամբ, երկիրն ու ժողովրդին կանգնեցրին հայրենազուրկ վիճակների առջեւ: Լաւագոյ-

նը, որ տալիս է իր վէպում հայ գրողը, զուսալ վերաբերմունքն է, անդամ կարելի է ասել, խղճմտանքը հերոսի (հերոսների) հայրենասիրական մղումների հանդէպ, որը, սակայն, անհաշուենկատ էր ու ոչ-խելամիտ: Արդեօ՞ք ահազանգը ուշ չէ:

Արդեօ՞ք ահազանգն ու կարեկցանքը բեւեռներ են Օշականի ստեղծագործական համակարգում: Այսպիսին ու վերջին անգամ դրանք այդպիսին դառնում են Մաթիկ Մելիքիստեաննեան մշակութային վէպում, ագդային ենթահողի մեկնութեան վրայ: Այստեղ է վիպասանի գեղարուեստական ներքին տեսողութեան ընդլայնման իրական հնարաւորութիւնը: Այստեղ է «պատմութեան խորհուրդը» կառուցելու նրա անշտապքայլը, թէկուզ 1915ի աղէտից յետոյ ժողովրդի վերընձիւղման, յարատեւութեան հանդէպ անսասան հաւատով: Ոչինչ որ «ուշ» է կարծես, կարեւորը, որ իր ձայնը հասնի ժողովրդի մտաւորական բարձր հատուածին, ինչը գիտակցւում է պատմութեան իմացական ընթացքի օշականեան բանաձեւերի ճշմարտութեամբ, ժողովրդին ճանաչելու ու նրա ուժը բացայացելու հաւատով:

Այստեղ է հերոսի ու հեղինակի գլխաւոր ջրբաժանը:

Այս ջրբաժանի մասին մի փոքր աւելի մանրամասն. վիպական ծաւալումները Մաթիկի՝ գիւղում եւ առհասարակ հայաշխարհում գործողութիւնների շրջանակում են, ուր ինքը «կենտրոն եւ ծայրեր» յարաբերութեամբ համապատասխանում է «գլխաւոր հերոս ու շուրջիններ» կառուցողական եղանակին: «Գլխաւոր հերոսը» անձնաւորութիւն է, հայեցք, հոգերանութիւն ու ապրում: Բայց կայ նաև «հեղինակի» տիրութը, որն աւելի ծաւալուն է, ընդգրկուն, քան հերոսի պարագան է ինքնին: Այստեղ գործում է երեւոյթների գնահատողական, մեկնիչ սկզբունքը, որն էապէս տարբերում է հերոսի վարքագծի քննութեան առարկայացուած տարրերից: Այն բաւական ընդլայնուած է, վստահաբար հաստատենք, որ գերակայ ներուժ ունի հերոսի պատկերման համեմատական լոյսի ներքոյ, քանի որ գործողութիւնների հանդէպ վերաբերմունքը գերիշխում է իրեւ բացարձակ գիտակցութիւն, իրեւ ճանաչողութեան ակտիւ գործոն, իրեւ ազգային երեւոյթների վրայ օրինաչափ, անառարկելի քննական «նստուածք»:

Արձակագիրը քանիցս կարծես զգուշացնում է ընթերցողին, որ երբեք չպիտի խարուել Մաթիկի շուրջը պտտուող դիպախաղի փայլից, միշտ պիտի սպասել հեղինակի խօսքի կողմնորոշումին, այսինքն՝ իմացական, վերլուծական չափաբաժինը աւելի ներգործուն է, քան գործողութեան ընաբուխ զարգացումը: Ի դէպ, Օշականը երկու հրաշալի նախորդներ ունի այս առումով եւս՝ Արովեանը եւ Դոստուեսկին: Միայն նկատելի տարբերութեամբ. հայ նոր գրականութեան հիմնադիրը ծովածաւալ հիացում ունի իր հերոսի հանդէպ, մինչդեռ Օշականն ու ոռւս խոշորագոյն գրողը իրատեսական, անգամ ծաղրական վերաբերմունք

են մշակել եւ իրենց հերոսների, եւ հերոսներին ասպարէզ նետող սոցիալ-քաղաքական ուժերի նկատմամբ, ինչը նոր կշու է հաղորդում վիպական գաղափարական հանգոյցներին:

Սա էլ երկխօսութեան մի եղանակ է հեղինակի ու հերոսի միջեւ, որ պայմանականորէն կարող ենք կոչել՝ «Համբ երկխօսութիւն», քանի որ «զրոյցներից» հերոսը չի փոխում. Նրա հոգում եւ վարքագծում, հակառակ հեղինակային թուացեալ ջանքի, ներքին կամ արտաքին վերափոխումներ չկան: Ինչ ըմբռնումով կամ առաքելութեամբ եկել է հերոսը, այդպէս էլ ասուափի պէս անհետանում է՝ հեղինակին ճգելով մտորում-ների ծանրագոյն շղթայ, որոնք մե՞րթ հեռանում, մե՞րթ մօտենում են հերոսի դատողութիւնների ապակեայ բուրգին: Մաթիկը «չի ենթարկւում» Օշականին:

Մաթիկի բերած անակնկալը հեղինակին թերեւս մահուան գիտակից ընտրութիւնն էր, որով կամաւոր անձնագոհութեան նշանն է հաստատում՝ բերելով խորը յարգանք վճռի հանդէպ: Մահը «առեղծուածի» ընտրութիւնն է, հերոսացումի ճիգը, որը բնարուխ է: Մինչդեռ կարող ենք յիշել Դոստոեվսկու վէպի հերոս Պետրուշային, որը, առնելով վտանգի հոտը, արագօրէն ճողոպրում է Սանկտ-Պետերբուրգից դէպի արտասահման: «Յեղափոխական» հերոսներին Դոստոեվսկին եւ Օշականը բերում են վիպական շիկացման կիզակէտ եւ քննում տարբեր մեկնակէտերից:

Ահա՝ այս ամէնի խորքում էլ ծաւալում է ընթերցող-հեղինակ երկխօսութիւնը, որի ժամանակ էլ, անկախ տեսանողի ցանկութիւնից, վշրուում է հերոսի՝ մեր յիշատակած բուրգը: Ապակեպատ վշրանքների տակ մնում են մաթիկների ու վերխովենսկիների խեղճացած մտքի լաթերը: Կեանքը ցոյց է տալիս նրանց խօսքի ողջ սնանկութիւնը: Շուռ տուէք նախադասութիւնները՝ բառե՛ր, բառե՛րի ջրվէժ, միայն փքուն արտայայտութիւններ: Զկան ծրագրեր, չկայ կամք՝ ինչ-որ բան շրջելու, բարեփոխելու: Կեղտակորոյս ու գարշահոտ գիւղի ընդհանուր ֆիզիքական նկարագրին գումարում է գաղափարական կարծրատիպերի մտածողութեան անկարելի թշուառութիւնն ու փոքրութիւնը:

Նորագոյն շրջանում, Օշականին նուիրուած աշխատասիրութեան մէջ, հայրենի գրականագէտ կիմ Աղարէկկեանը նկատել եւ ամփոփել է զուտ գրական հանգոյցներում վիպական երկու հերոսների գաղափարական ու գեղարուեստական առնչութիւնները՝ ելնելով, իր տպաւրութեամբ, վէպի առաջարանի հիմնադրոյթներից. «Օշականն ինքը վիպական կերպար է ընդիանրապէս, որ առանձին քննոթեան նիս է, իսկ մասնաւրաքար, այս պարագայում, խնդրոյ առարկայ վէպի հերոսներից մէկը: Խօսել այս վէպի առաջարանի մասին, նշանակում է ուրուագծել նաև հեղինակ-հերոս կերպարի զարգացման ուղին ոչ միայն այն պատճառով, որ ինքն է հանդիպում, ուղեկցում, բացատրում

ու բացայացում Մաթիկի հոգեբանութիւնը, ապահովում հեղինակային ներկայութիւնը վիալական մքնոլորտում, այլ նաև հարցեր առաջադրում, տալիս պատասխաններ..., հանդիսանում վեպում ծաւալուող մտայնութիւնների հասցեատերը... դատում... զործոնների ազդեցութեամբ վերակերտուած գրական բնաւորութիւն»<sup>67</sup>:

Ազգային լայն ու վիճարկուած գաղափարական խնդիրների երկուութիւնը հայ իրականութեան մէջ անտեսել չի կարելի նաև այսօր: Ուստի հեղինակային ներգործութեան սահմանները խոր արմատ են նետել հակադիր ուժերի բանակներում: Կան աշխարհաքաղաքական մտայնութիւնը բարձր պահող ուժեր, որոնք նրբամտօրէն շրջանցում են Օշականի, Շահնուրի, Մահարու ընդվզումի հասցէնները: Նրանց մօտ Մաթիկի եւ մաթիկների հանդէպ եղած կարեկցանքը հերոսացումի վկայութիւն է, որը բխում է հայրենասիրութեան առարկայացումից: Այս հարցում նրանց պատկերացումների մէջ բանավէճն ընդունելի տարբերակ չէ եւ վերուստ մերժուած: Ճիշդ եւ ճիշդ Մաթիկի պէս, որի գաղափարական հայեացքը բեկել հնարաւոր չէր:

Հերոսի նմանօրինակ «անկախ» կեցուածքի դէմ Օշական հեղինակի ընդվզումը երեւան է հանում ներգործութեան գարմանալի ներուժ, երեւոյթի դէմ անհանդուրժութեան գրողական համոզիչ վարքագիծ, որի վրայ լուսարձակ է նետուած չորս անկիւններից, ինչի շնորհիւ բացուած են իմացական խորքերում թաքնուած մեկնական հնարաւորութիւնները: Եւ սա արձակագրի մեծագոյն նուաճումն է՝ գրեթէ լուռ, առանց ինքնահաստատման պատրանք բերող շատախօսութեան, ինչից տառապում է Մաթիկ Մելիքիսանները:

Իսկ մաթիկները բոլոր ժամանակներում իւրացրել են մեռնելու արուեստը, որը ամէն ինչից զատ վէպի հերոսին հաղորդել է նիհիլիզմի<sup>68</sup> որոշ տարրեր: Այդ նիհիլիզմն է, որ զօրացրել է մահուան խորհուրդը<sup>69</sup>, հակառակ որ փնտռել է սխրալի արկածը ընդդէմ թուրքական բռնակալութեան: Օշականի հարցման դիմաց «լուութիւնը» «ոչինչի» յայտարան է: Ինչի՞ էր կոչուած, ի՞նչ արեց: Արդեօք հասաւ որեւէ արդիւնքի: Դեռ Մուրացանի Առաքեալի հերոսը անհանգստութեան իրական պահեր տուեց Խոջա Միրզային՝ Սայու ընտանիքին առժամանակ ազատելով վաշխառուի շահատակութիւններից:

Օշականի հերոսի նիհիլիզմը բխում է աւելորդութեան զգացումից: Նա դեռ «մանուկ մըն էր՝ հակառակ մեծ զարգացումին»<sup>70</sup>: Խօսքն անձին չի վերաբերում, այլ՝ յեղափոխական տիպարին, երեւոյթի ընկալմանը, թէեւ հեղինակը յաւակնութիւն չունի «նուաճելու» գաղափարատիպը: Նոյն տեղում գրողն ընդգծում է, որ հերոսի տիպարանութիւնը իր համար նուաճուած հասկացութիւն է. «Մաթիկները հազար էին սկսած մաքսի բենակիրներէն մինչեւ ամէնէն մաքրատաղանդ գրագէտը»<sup>71</sup>: Այդ տիպարանութեան տարրերն են՝ գործելու, եռանդը սպա-

ուելու անսահման նուիրումը, ազգային ճանաչողութեան սահմանափակ ընկալութիւնը, յուգաշխարհը, մշակոյթը իրենց մէջ կրելու ու բացելու անմիջականութիւնն ու խորութիւնը՝ Սայեաթ-Նովայից (1722-1795) մինչեւ Բաֆֆի (1835-1888):

## ԳԱՂԱՓԱՐԻՑ «ԱՇԱՆՑԵԱԼ» ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

Արեւելահայ, նաեւ խորհրդահայ, գրական մշակութային արժէքների գեղարուեստական ճանաչումը Օշականի համար միշտ էլ եղել է կենտրոնական հարցադրում: Եւ 1910ականներին, եւ յաջորդող տասնամեակներում գրողը պարզապէս մարտնչել է իր գրական հայեացքի «անվերաքննելի» դրոյթների պաշտպանութեան համար: Դա ուղղակի նշանակութեամբ գրապայքարի<sup>72</sup> թէժ կէտն էր, եւ շրջափոխելով Մաթիկի կերպարի առիթով վէպից բխող բնութագրիչ գնահատականը՝ կարելի է այստեղ Օշականին վերագրել նոյն «տրիբունի» դերակատարութիւնը, բայց մարտնչո՞ղ արիբունի, որի շահը գրականութեան համար սրբազն կուն է<sup>73</sup>:

Այդ պատճառով նա ծանրագոյն հարուածներ է ընդունել, նրան «Հայրենատեաց» ու «դաւաճան» են կոչել, պատրաստել քաղաքական կարգի հաշուեյարդարներ, անդամ հալածանքներ՝ կրթական, եկեղեցական մակարդակների վրայ: Մահից ընդամէնը տարիուկէս առաջ, վերյիշելով իր դէմ արեւմտահայ ու խորհրդահայ բախումների «նենգ հոգերանութիւնը», ընդգծելով, որ «Խորիրդային Հայաստանի գրական ճիզի» համեմատական տկարութիւնը առաջին հերթին քաղաքական պայմանների, այլ ոչ տաղանդի ուղղակի բացակայութեան հետեւանք է, նա Ռամկավար Ազատական ղեկավար գործիչ Սամուէլ Թումայեանին (1912-1988) գրում է. «Ուս գրականութիւնը 1917էն ասդին անցած է բազմաթիւ տագնապներէ<sup>74</sup>: Արեւելահայ գրականութիւնն ալ կը տուայտի նոյն տագնապներուն մէջ: Ահա՝ իրականութիւնը: Ինձի պիտի առարկէին իմ շափերուս սխալը եւ ոչ թէ վերագրէին հայրենիքը ատելու, ներգաղքը հարուածողի նենգ հոգերանութիւնը: Բայց միամիտ չեմ, որ պիտի շրափանցեմ հաշիւներուն ներաը: Գրականութեան մտնելս ասդին ես տառապեր եմ հասարակ տեղիքէն, դիրինէն, աժանէն»<sup>75</sup>: Այդ «հաշիւների» չնորհիւ Օշականը խորհուրդ է տալիս զատել իրարից պատմագրութիւնը եւ ուսումնառութեան մեթոդները: «Տեղիքէն», «Պիւրինէն» կրած տառապանքի դիմաց նա հենց սկզբից բացւում է դէպի ֆրանսիական եւ ռուսական գրական ածուները, ընդունում կրած ազդեցութեան բարերար ազդեցութիւնը եւ նպատակասլացութիւնը: «Օտար գրականութիւնները (Սթանտալ, Պալզագ, Ֆլուպէ, Տայսրայնվարի իմ նորին անդրանիկ տագնապները կը կազմնէն) ինձի տուին հպարտութիւն, մեծութեան շատ յատակ զգայութիւն»<sup>76</sup>:

Յեղափոխական եւ սոցիալիստական մտածողութեան ընկերային խորքերում Օշականը վերակազմում է մշակութային ճանաչողութեան բանաձեւերի յատակագիծը՝ վերստին Մաթիկի «աջակցութեամբ», ինչն ուղղակի տանում է երգիծական նուրբ սլաքներով: Բարքագիրը բացայալում է յեղափոխութիւնների իմացական սնանկութիւնը եւ միեւնոյն ժամանակ փառագոչ ձգտումը՝ ներգրաւել, սեփականել մշակութային յեղափոխութեան, «նոր արուեստի» հնարաւոր դափնիները՝ որպէս ոչ-աւել, ոչ-պակաս համամարդկային իդեալի արտայալութիւն: Մաթիկը կրկնում է այն, ինչ լսել է մոսկովեան սրահներում: Այսպէս, «մասսային» տիրապետելու պահանջի յարաբերական լոյսի տակ նա մարտնչող սոցիալիզմի գաղափարական զինանոցից փոխառում է նաեւ նորագոյն թեզիսներ: «Այս բոլորը սակայն հարազատ նարմնառութիւններն են անոր իմացական եւ քաղաքագիտական մեծ պատրաստութեան: Իր (ըստ Հեղինակի՝ Մաթիկի եւ ազգային յեղափոխական առաջնորդների պատրաստուածութեան ծաղրի յատկանշական կողմն է սա - Ս.Դ.) սկզբունքներուն համեմատ՝ «առանց իմացական մեծ կուտուրի չի կայ, չի կարող լինել հարազատ յեղափոխական: Կոհիը առանց բանականութեան՝ մի սխալ աւանդիրա»<sup>77</sup>, - մէջքերում է արձակագիրը մի՛շտ էքսկուրսի յորձանքում գանուող իր հերոսի տեսական պատմամշակութային գանձերից մի նոր փունչ:

### ՄԱԹԻԿԻՑ ԴԻՊԻ ՕՇԱԿԱՆ ԶԳՈՒՌԸ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ինչպէս արդէն նկատել ենք, Մաթիկ Մելիքիստինեան վէպն առանձնանում է հայ երկու գրական մշակոյթների բախումի գեղարուեստական փորձով, ուր արդէն գեղարուեստական կառուցուածքային մտորումները էապէս նահանջում են հրապարակախօսական շնչի դիմաց, ուր գրողը իր տեղը պիջում է քննադատին: Իսկ որ գրական երկու հատուածների միջեւ «լարումը» յաճախ վերաճում էր առճակատումի, ակնբախ երեւոյթ էր, ինչը քանից ընդգծել են եւ արեւմտահայերը, եւ արեւելահայերը (Դանիէլ Վարուժան (1884-1915), Օտեան, Շահնուր, Շուշանեան (1903-1941), Անդրանիկ Մառուկեան (1913-1989), Ա. Շիրվանզադէ (1858-1935), Վահան Տէրեան (1885-1920), Կոստան Զարեան (1885-1969), Զարենց եւ շատ ուրիշներ): Գրական առողջ մրցակցութիւնն է, որ յաճախ իր դիրքերը պիջել է լարումի կամ առճակատումի, ինչի շուրջ գնահատումների արձագանգներ կարելի է առանձնացնել նաեւ այսօրուայ գրական յարաբերութիւններում: Դրանց է, ըստ էութեան, նուիրուած Օշականի բանավիճային, բայց խորքով գիտական ճանաչումի արժանացած «Չուգակշիռ...»ը<sup>78</sup>:

Մաթիկի նկատմամբ Հեղինակի հետեւողական երգիծանքը կարելի է դեռ մի կողմ թողնել. վերջինս աւելի լուրջ հարց է քննում այս տողերի ենթախորքում՝ ազատագրական պայքարի ձեւաւորման մէջ տրիբուն-

ների բարձր ազդեցութեան խնդիրը արեւմտահայ աւազանում։ Այն գրգունակ է եղել, ներգործել միայն մտաւորականների յեղափոխական շնչի վրայ, որոնց գերինդիրն էր գաղափարների «փոխադրում» ու «տնկումը» բարերեր դաշտում ժողովրդի սրտի մէջ<sup>79</sup>։ Այստեղ էլ երգիծական ուղղութիւնը որսալ դժուար չէ. մեր առջեւ է մաթիկների «պերճանքն ու թշուառութիւնը»՝ յաչս ժողովրդի ու հեղինակի։

Հեղինակի դժոհութիւնը բխում է արեւելահայ գրողների գեղարուեստական մտածողութեան մէջ արմատ գցած հրապարակագրական շնչից, կեանքից էական կտրուածութիւնից։ Օշականը դա առարկայացնում է՝ գեղարուեստական պատումին հաղորդելով մշակութային բազմագոյն հանդերձ։ Մաթիկն ակամայ դրդիչն է. ինքն է հեղինակին մղում արժէքների համահայկական ճանաչողութեան, աւելի ճիշդ՝ արեւելահայ գրական հոգերանութեան խորաշերտ ընկալման, որը մինչ այդ չնուանուած Ատլանտիդա էր բարքագրի համար։ Օշականն է, որ խոստովանում է. «Կովկասը, այս դարու սկիզբը (ի. դարը - Ս.Դ.), իմ մատղաշ զգայնութեանս համար անտարազելի, համապարփակ խորհուրդ նը, հոգերանութիւն մըն էր։ Մարիկ Մելիքխաննեանցի պատմումը ինձի բերաւ բարիքը այդ Կովկասը աւելի յատակ տեսնելու ինձմէ ներս։ Պարզուեցան ինձի համար բաներ, որոնց հանդիպեր էի իրենց գրականութեան մէջ, բայց չէի հասկցեր»<sup>80</sup>։

Առաջին համադրական արդիւնքները, կարելի է ասել, գրական երկու համակարգերի բախումի հետեւանք են Օշականի համար։ Մեր առջեւ բնագրի տիպարանական ընկալումն է. արեւելահայ գրականութեան ոճային տարրերում նա տեսնում է «անկանգնելի աղքատութիւն»<sup>81</sup>, որը իրապաշտութեան, սիրտէտային պարզ ընթացքի, անյաւակնուտ նկարագրութեան հոմանիշ է։ Այս հարցում քննադատի տեսողութիւնը եղել է «նախնական», որը յաղթահարելու համար հարկ էր յետագայում արեւմտահայ գեղարուեստական «տարադէպ խնամքը» առաւելութիւն չդիտել, քանի որ խորքում այն մօտենում էր լեզուական-գրական բռնազրու կարգի, ինչ ինքն անուանում է «գրական»։ Սկզբնական շրջանում, Պարոյք Սեւակի (1924-1971) խօսքերով՝ «հայ գրականութեան մեծագոյն ըննադատը»<sup>82</sup> «գրական» եզրի տակ որսում է «արուեստականութիւն», ինչը դիտել է պատանութեան տուրք։ Արդարամիտ է արեւմտահայ գրողի տագնապը, թէ դա կարող է հասցնել գրական համահարթեցման։

Մինչդեռ արեւելահայ գրական ուղիներում, ըստ իր հայեացքի, առանձնանում է «ժողովրդական աւիշը», յատկապէս բանաստեղծութեան կալուածում այն բերում է այնքան անհրաժեշտ զգացական ուղիը, բայց եւ միաժամանակ յարուցում տագնապի նախանշան արուեստի «պարզունակութեան» առումով, քանի որ կարող է փախչել մտքի միջուկը՝ «Անոնց ժողովրդական աւիշը, մանաւանդ երգերու մէջէն,

գտած էր սիրտս, բայց տառապանք առթած ուղեղիս»<sup>83</sup>: Դա անպայմանորէն գնահատողական ակնարկ էր Յովհաննէս Յովհաննիսեանի (1864-1929), Թումանեանի, Աւետիք Խաչակեանի (1875-1957), Ալեքսանդր Շատուրեանի (1865-1917) եւ այլոց երգարուեստի ժողովրդական ակունքների մասին, որտեղ, իր կարծիքով, ընդհանրական «թուլութիւնը» բանաստեղծութեան իմացական նորարար դաշտի պակասն էր ու գեղարուեստականութեան հանդէպ ընդգծուած արհամարհանքը՝ ի շահ ժողովրդական պարզ ընթերցանութեան: Դա հաւասարապէս վերաբերում էր արեւելահայ երգիչների սիրային եւ սոցիալական քնարի ընդգրկումներին: Ցայտնի է այս առթիւ Խաչակեանի խոր դժուհութիւնը Օշականից:

Հակաղրական ելագծով նոյն վէպի մէջ գրողը պարտք է սեպում Մաթիկի թողած ազգեցութեան չնորհիւ տեսնելով արձակի ոլորտում 1970-90ականների արեւմտահայ վէպի «անընականութեան» դիմաց արեւելահայ վէպի (նշենք միայն իր թուարկումը՝ Րաֆֆի, Շիրվանզադէ, Մուրացան, նոյնիսկ Պերճ Պուշեան (1837-1907) իրապաշտական առաւելութիւնները<sup>84</sup>): Այստեղ էլ կայ «անխնամութիւն», ինչը դադտնիք չէր արեւմտահայ միջավայրում, բայց, ըստ Օշականի, աւելի բնական էին թում արեւելահայ խոնարհ տիպարները՝ արեւմտահայ «յիմար» (Մատթէոս Մամուրեանի (1830-1901) գրական կառոյցի առումով՝ Մեւ Հեռին Մարդը ամբողջութեամբ) եւ «կեղծ» հերոսների (ընդգծում է Սրբուհի Տիւսարի (1841-1901) նամականի վիպագրութիւնը) դիմաց:

Արեւմտահայ գրականութեան մէջ դարասկզբի գրապատմական զարգացումները բաւարար լրսաբանում չունէին, ինչը Օշականը համարում է այդ գրականութեան հիմնական թերացումներից մէկը՝ արդի հետաքրքրութիւնների քննութիւնը ենթադրում է մարդը, ժամանակը, թուրքի բարդոյթը, սոցիալական ու ազգային հիմնախնդիրները, մի խօսքով՝ բարքագրութիւն: Այս առումով նա իրեն իրաւունք է վերապահում Արովեանի պէս կտրուկ դժգուելու, թէ նման նիւթերի բացակայութիւնը գրականութիւնը գրկում է իրականութեան արտացոլումի յանձնառութիւնից: «1900ը մեր ժողովուրդին այն աշխարհն է, որ արևունտահայ գրականութեան մէջ հազի թէ դալուկ անդրադարձ է արձանագրուած: Գրական շրեղ սերունդ մը եւ աւելի քան եղերական, շատ ծաւալուն, ահեղ իրադարձութիւններ մեզի կը ներկայանան այսօր՝ կարծն իրարու անհաղորդ, եթէ ոչ կոնակ դարձոցած»<sup>85</sup>:

Ակներեւ է, որ Օշականի գրական ըմբռնումի մէջ առճակատ, կարծր իրապաշտութիւնը արժանանում է սուր քննադատութեան, քանի որ իր կարծիքով՝ «Րաֆֆի եւ իրապաշտները կը կորնին հանգանակներու»<sup>86</sup>: Այն արեւելահայ արձակ էր մտել ուսւ գրական աւանդոյթից, այն, ինչ խորհրդային գրականագիտութեան մէջ փառաբանում էր «քննադատական ուալիզն»<sup>87</sup> ամէնակուլ տարագի տակ: Արեւ-

մտահայ տեսարանը առաջիններից է, որոնք նկատում են միւս գրական ուղղութիւնների «պաշտպանականի» անհրաժեշտութիւնը:

Արձակագիրը էապէս տարբերում է ճշմարտութեան վաւերական իրաւունքը քննադատական իրապաշտութեան պարտադրանքից, որի ընդհանրացումների շահարկուած եղանակը այլ է տիպարանութեան իր ըմբռնումից: Ինքն արդէն կողմնակից է գեղարուեստական վաւերականութեան. դա վկայում է քննութեան ենթակայ այս վէպը, սակայն չի ընդունում իրապաշտութեան հեղձուցիչ մթնոլորտը. այն ծանր թաթ է գրողի հոգերանական երեւակայութեան վրայ, այն կաշկանդում է գրողի ազատ տեսողութեան ընթացքները<sup>88</sup>:

Եթէ անհրաժեշտ է, Օշականը մասնաւորում է արեւելահայ արուեստի յուզական սուր ներգործութիւնը: Երբ Մաթիկը երգում էր Սայեաթ Նովայից, այլ աշուղներից, Հեղինակն անմիջապէս բերում էր իր միջավայրի վառ տպաւորութիւնը, այն, ինչ անդամ երիտասարդ թրքուհուն, սանդիկ ծեծող թաթար հարսնուկին եւ միւսներին հաղորդում էր «անպատում, խենքնեցնող քաղցրութիւն»<sup>89</sup>: Ներգործութեան ակունքը ազգային ժողովրդական ծաւալուող մեղեդու աշխարհն էր՝ «օրիերգ, մահերգ, հարսներգ, սիրերգ», որը դիւթում էր հաւասարապէս հային ու թաթարին: Վերջիններիս պարագան պատմական արմատ ունէր. չէ՞ որ 1878ից այս կողմ Պրուսայի շուրջ ապաստանած հազարաւոր աղքատ ու խեղճ թաթարներ սերնդից սերունդ փոխանցում էին կովկասեան նըւագները, անդամ՝ տարագը, կարօտը, այն, ինչ գրողը համարում է բարքի բաղադրիչ: Հերոսի երգած Սայեաթ Նովան թաթար կանանց մէջ վերարթնացնում էր կովկասեան մելանուշ մեղեդիները. դեռ «չնորոցուած... աղաղակները [երածշտութեան հնչինները] կը զգային պարոնիկին (Մաթիկի - Ս.Դ.) ձայնովը»: Գրողի հիացումը անխառն խոնարհում էր արեւելահայ խկատիպ ժողովրդական արուեստի տարերքին, համարծէք բարձր գնահատականի՝ «քառերեն վեր, Կովկասի հողեն կազմուած հողիին անհուն քափանցումովը մեզմէ [ արեւմտահայ ժողովրդական զանգուածէն] ներս»<sup>90</sup>:

Ի դէպ, ժողովրդական երգի փայլի դիմաց մի փոքր զուսպ է եւ Բաֆֆու վէպերի առթիւ տրուած գնահատութիւնը՝ վերստին միջնորդաւորուած Մաթիկի «քարոզչական» զօրութեամբ. «Ու այդ պարոնիկը կը պատմեր մեզի Ռաֆֆիի վեպերը, կենդանի, քաղցր, կարծես զրուած էջ մը կարդալով, այնքան իր հիւանդու պատանութիւնը զինքը աճեցուած էր ներսէն: Գինովութիւն մըն էր այդ բարբառը լսել իր բերնէն»<sup>91</sup>: Ինչպէս նկատելի է, հիացումը ոչ այնքան արեւելահայ պատմավիպասանի գաղափարական կամ գեղարուեստական բովանդակութեան էութիւնից է, որի հանդէպ Օշականը յայտնի վերապահութիւններ ունի, այլ լեզուի հմայքից, այն էլ՝ Մաթիկի «վերաշարադրանքի» շնորհիւ: Հեղինակը չի յապաղում իր մեկնաբանութեան մէջ տալ խոր

անբաւարարութիւնը Բաֆֆու գրականութեան մէջ, նոր բնութագրումով, «ազգային իրականութեան» ընկրկումից, որին անդրադարձը նա համարում էր միայն վայրկենական ցոլացումի հետեւանք, մի տեսակ Ալեքսանդր Դիւմայի (1802-1870) եւ Վիկտոր Հիւգոյի (1802-1885) վիպագրական ընկալման, ուղղութեան կաղապարումի փորձ<sup>92</sup>: Դա անընդունելի էր Օշականի համար հենց բարքագրութեան արժեւորումի լոյսի տակ:

Արեւելահայ գրականութեան յատկանիշներից մէկը արեւմտահայ գրողն ու տեսարանը որսում է ռուսական իմացական մտքի խոր ու «հողային», այսինքն՝ մեր կարծիքով, «տիրական» ազդեցութեան ոլորտում, եւ դա՝ դեռ Նալբանդեանի շրջանից<sup>93</sup>: Արդարութեան սուր լղացքը շատ յաճախ է արձագանգներ գտել ռուսահայոց ընկերային ու գրական ըմբռնումներում: Որոշ ծայրայեղութիւն կայ, անշուշտ, Օշականի այս մեկնական դատողութիւններում<sup>94</sup>, սակայն կայ նաև հիացում ու ոգեւորութիւն («Սլավ հոգին մօտ է հայու հոգիին»<sup>95</sup>), որը փաստարկելիս ու հիմնաւորելիս դրսեւորում է անվրէպ նպատակասլացութիւն եւ գիտական ճանաչողութիւն: Այսպէս, նոյն տեղում համեմատելով հայ երկու հատուածների քաղաքական եւ մտաւորական տարրեր զարգացումները՝ նա եզրակացնում է. «1850էն ասդին, արեւելահայ երիտասարդութիւնը - մտաւորականներու փաղանգը - իր սնունդը, ուկորները ճարեց այդ հոգերանութեան մէջ: Բայց մեր յեղափոխականները ուսերեն չսորվեցան անշուշտ իրենց ազգը սիրել եւ անոր համար զոհուելու յօժարիլ, բայց սորվեցան անոնցմէ - մեղքերեն դուրս - գործելու, գործողութեան կիրքը, որ առանձին իրականութիւն է»<sup>96</sup>: Այս տողերում «ազնիւ նախանձ», իրականում՝ գրական կրքոտ խանդ կայ. ի՞նչ բախտաւոր են արեւելահայ եղբայրները. նրանք կենսագործելու, գործողութեան կիրքը կեանքում վերակազմելու պարարտ հող են գտել ռուսական առաջադիմական մտքի յորձանքներում, բայց երբեք ոչ ի հաշիւ ազգային քաղաքական-ընկերային մտահոգութիւնների: Արեւմտահայ գրողը բարձր է դասում արեւելահայ գաղափարական-հասարակական աւագանը «իրենցինի» հետ պարզ համեմատութեամբ, ինչն իսկապէս բարձրացրել է հայ գրականութեան որակական կշիռը, եթէ նոյնիսկ կան գրական անխնամութեան արեւելահայ յատկանիշներ, որոնց մասին բարձրաձայնում է:

Եւ բուռն է արեւելահայ «բախտաւորութեան» հանդէպ նրա հիացումը, դիպուկ՝ խօսքի ուժը. իսկապէս՝ «հայ հայրենիթին վրայ շուրացեր էր պայծառ, հաւատաւոր, քիչիկ մը զգայնու հոգերանութիւնը ալա ցեղերուն»<sup>97</sup>: Նուրբ ու ճշգրիտ է նաև «զգայնու հոգերանութիւն» բնութագրումը, որը ռուսներից է փոխանցուել արեւելահայ իրականութիւն ու գրական դաշտ: Հայ գրականութեան մէջ անվիճելի են հոգերանական ռոմանտիկական, լուսաւորական, իրապաշտական շար-

ժումների պատկերաւորման, սոցիալական ու քաղաքական գարգացումների ուսական յետագծի կեռմանները, անգամ ազդեցութեան ուղղակի դրսեւորումները, որոնք ուղեկցել եւ ուղեկցում են մեզ առնուազն ժթ. դարի առաջին կէսից: Կարելի է անվարան ընդգծել, որ կար ուսական գրամշակութային բարերար տիրապետութեան մշակուած համակարգ, որը իրեւ հարստացուցիչ զարկերակ մնում է առայօր: Հեղինակն այն նրբամտօրէն համարում է աւանդոյթ կամ «աւանդութիւն»<sup>98</sup>, սակայն դժգու է իրացման խորքային արժէքից<sup>99</sup>, ճիշդ այնպէս, ինչպէս արեւմտահայերի գրականութեան պարագային, որը հսկայական չափերով կրեց ֆրանսիացիների ազդեցութիւնը:

#### ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԾԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Մենք արդէն խօսել ենք մատենագրութեան մէջ պատմագրութեան միահեծան առաւելութիւնների առթիւ արձակագրի դժգութիւնից, ուր վերջինս չէր խնայել անգամ իր արմաշեան ուսուցիչներին, նաև «Հին արմաշցի» Մաղաքիա Օրմանեանին (1841-1918): Գործածած գիրթ ու կտրուկ ոճը եկեղեցական պատմութեան ու ժողովրդական տարերքի, կեցութեան ճշմարտութեան տարանջատման փորձերի դէմ էր, որը դալիս էր պատմագրութեան աւելի վաղնջական ժամանակներից, տուեալ դէպքում՝ ժէ. դարի օրինակներից:

Հեղինակը պատմագրութեան մեղքը կեցութեան, փաստերի կցկը-տուր ու ընդհանուր կապերից փրժած մանրամասների մէջ է տեսնում. ժլատ փշրանքներ է մատուցել հին գրիչը, արհամարհել է ապագայի ընթեցողին, ազգային կիսկատար ու անշուք իրողութիւններ է պարզել, անգամ եթէ բուն գործը եղել են «օրագրերն ու յիշատակները», մէկ բառով՝ ժամանակագրութիւնը: Իրականում նրա յիշատակած միջնադարեան երկու մշակները բարքագիրներ էին, որոնք նախընտրել էին պատմութեան ժամանակագրական արձանագրումը<sup>100</sup>:

Բայց դա նրանց, ըստ էութեան, չի յաջողուել. ո՛չ Երեմիա Չելեպին (1637-1695), ո՛չ Գրիգոր Դարանաղին (1576-1643), գտնում է գեղարուեստական բարքագրութեան մէջ հմտացած Օշականը, չեն ստեղծել ժողովրդի կեցութեան եւ մշակութային գնահատութիւնների ուրուդիծ, ինչը հնարաւորութիւն պիտի տար մեզ վերակազմելու «...մեր ժողովուրդը իրեւ ապրում ու պատմական իրողութիւն»<sup>101</sup>: Նրանք մնացել են պատմութեան լուսանցքներում, ուր բարքագրութիւնը «զգեստափոխուած է», բայց՝ առանց «ապրումի» թրթիուի եւ ժողովրդական տարերքի ներգրաւումի:

Այստեղ մենք որսում ենք խոշոր գրողի բարքագրութեան պաշտպանական ջիղը, որը բխում է գրականութեան դերի բարձր ըմբռնումից եւ իր բերած ներդրումի գիտակից իմաստաւորումից: Միայն թէ կարծես ի զուր է նա սուսեր ճօնում ժէ. դարում Եւրոպա անցած պատ-

մական դէմքերի վրայ. Նրանք գրողական յաւակնութիւններ չունէին, աւելին՝ նրանց յանձնառութիւնը ժողովրդին պատմութեան դարպասից ներս հրաւիրելը չէր, երբ իրենք էին դրսում: Իսկ յայտնի բան է, դէպքերի արձանագրութեան մէջ շարժիչ ուժը մնում են գաղափարն ու պայքարի տրամաբանութիւնը կիզակէտ դարձրած անհատը, ուր ժողովուրդը ժամանակագրի պատկերացումներում զբաղեցնում է կերտուող պատմութեան «ետնաբեմը»:

Այդ ժողովուրդն է, որ քննադատ Օշականն ի գուր փնտռում է Տիւսարի «մտերմիկ» արձակի մէջ («Տիւսարի թեզերը դուրս են մեր ժողովուրդն»<sup>102</sup>): Իսկ դրանից առաջ, արեւմտահայ աշխարհիկ գրականութեան ձեւաւորման շրջանում, վիճակն առաւել քան անմիտաբար էր. («Մօտ կես դար մեր ժողովուրդը գոյութեան իր պայքարը ապրեցաւ, եւ այդ տագնապը մեր արուեստեն մուտք չունեցաւ արժանաւոր լրջութեամբ: 1850-80 այդ տագնապը դիմատրեց ճառերով, երգերով եւ անցելապաշտ ներկայացումներով»<sup>103</sup>), յուսատու չէ նաեւ սփիւռքեան շրջանի գրական այս օրը եւ հեռանկարը («Պատերազմը եւ անոր յաջորդող ճարուան տարտինած են գեղարուեստական ստեղծումներ կարելի ընող ջերմութիւնը, համախմբումը, կենցաղը: Այնպէս որ, - ամփոփում է մտքի շրջագիծը «Զուգակշիռ»ի հեղինակը, - արեւմտահայ վէպէն հաստատ, խոր ձգուումներ սպասելը աւելորդ աշխատանք նր պիտի ըլլար...: Իմ պահանջը անդին է գրականութենէն»<sup>104</sup>): Խօսքը միջազգային չափանիշներին, իր գտած բնութագրումով՝ «կանգուններին», գրականութեան ճանաչողութեան աւագանին եւ առաջին հերթին յետեղեռնեան քաղաքական նախապայմաններին է վերաբերում:

Ի հա՛րկէ, վիպասան-քննադատը անհուն սէր է տածում արեւմտահայ վէպի ճակատագրի հանդէպ, սակայն ենթակայական զգացումը չի խանգարում սթափ գնահատութիւնների յորդումին: Ուշագրաւ է, որ Մաթիկ Մելլիքին ճանաչնեան վէպում նա զգացականի արդարացուած հնարը չի շահարկում: Իրեն եւ միւսներին՝ ժանրի մէջ յաջողակ թէ ձախողուած, վիպապաշտ մղումով թոյլ է տալիս համարել «ժողովուրդի տրտում զաւակներ», այսինքն՝ տեսանողներ եւ արձանագրողներ, բարքագիրներ, լուծ, որ գատապարտուած են կրելու ստեղծագործական ողջ պատասխանատուութեամբ:

Վիպասանի եւ ժողովրդի անքակտելի եղբայրութեան յուզական, Օշականի ստեղծագործութեան մէջ հազուազիւտ հանդիպող բանաստեղծական խոստովանութիւն է իւրատեսակ զգացական ներրողը, ներապրումի բարձր կիզակէտ, որ մօտենում է Աբովեանի ու Զարենցի արձակի բնագրային ներքին շերտերի գեղարուեստական հնչողութեանը. «Ո՛վ վէպը արեւմտահայ գրականութեան: Դուն չես նմանիր ուրիշ ժողովուրդներուն մօտ քու անունը կրող գրական սեռին, ուր արտիստագետը բուղթին յանձնելու իր շուրջը կը գտնէ հատ-հատ,

իր ներսը շատ-շատ, սանկ սեռային ակուներէն ծլող կամ հոն հասնող: Դուն վեպն ես այն ժողովուրդին, որ զգաց ինչ որ ուրիշներուն զրուած է զգալ, զգայարանքներուն ճամբաներէն, բայց ապրեցաւ մնայուն մահուան, տիրական զրկանքին, ամէն րոպէ իր հոգիին վրայ առկախ սարսափին ճիրաններուն մէջ եւ արեւը, ցորենը, զինին, ձերը, մարդերու միաը դիակներու վերածած ծամեց ու ծամեց, երբ իր քրտինքին գնովը իր այլազգ դրացիները այդ ամէնը կը փոխարկէին հաշտ, հեշտ, քաղցր զինովութեան... Ո՞ւ մեր վէպը»<sup>105</sup>:

Տողերից, պատկերից, անխառն զգացումից այն կողմ վիպասանի կոչման ճանաչումն է, ժողովրդական կեանքի ամբողջական ընդգրկումի պահանջը: Օշականը խորն է հասկանում պահանջի խորութիւնը: Դա այլեւս միայն բարքագրի պարզ հարցադրում չէ:

Իր տառապակոծ սրտի առջեւ արեւմտահայի ցրօնքն է, նշանակում է՝ գիտակցում է, որ վտանգուած է նրա գրական վաղը Սփիւռքի միջօրէականներում:

Մինչդեռ գրականութիւնը Յակոր Օշականի փրկիչ մատեանն է:

## ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Գրական երկու «Համակարգերը» վերաբերում են արեւելահայ եւ արեւմտահայ ճանաչողութեան ըմբռնումին: Խնչո՞ւ Համակարգ՝ որովհետեւ ներկայացնում են ազգային-մշակութիւնին առանձնայատկութիւններով, զարգացման ներքին արամարանութեամբ, բարքով, հոգեբանութեամբ, ազդեցութիւններով, լեզուով պայմանաւորուած տարբերիչ հայեացքների կարգեր:

Արեւելահայ գրականութեան մէջ նման զուգակշիռ Համակարգուած քննակերպեր գրեթէ չունենք: Օշականն այստեղ էլ բացառիկ է:

<sup>2</sup> Հենց Մաթիկ Մելիքխաննեան վէպում կան գրութեան «Հրմնական ժամանակից» ուշ մնացած ընդգրկումներ, որոնցից նշենք մի քանիսը: Այսպէս, խօսելով գրականութեան մէջ թուրքի թողած ակնրախ բարդոյթի մասին՝ հեղինակը ընդգծում է ժամանակային ճգույղ կորը: «Երեսուն տարիներ, - խոստովանում է արձակագիրը, - 1915-ն ետք, կը մնան անկարող իմ ներսէն պոտ մը քան կոտրելու, այնքան բուրք իրաւ էր իմ գգայնութեան վրայ» (Յակոր Օշական, Մաթիկ Մելիքխաննեան, Պէյրութ, 2010, էջ 152-153): Կամ գրեթէ նոյն տեղում աւելացնում է՝ «Աւիկա անշուշտ չէ տակաւին բուրքը չճանշալը 1940-ին իսկ, երբ Ամերիկա եւ Անգլիա, զիտնալով հանդերձ, որ բուրքերը գերմաններուն ենտ են, բաղարական իմաստութիւնը արժենորեցին անոր ծոցը տեղալով աշխարհի բոլոր բարինները» (նոյն, էջ 153): Աւելին՝ մի քանի էջ յետոյ լիշտակում է նաև «1941-ի աղէւրը» (նոյն, էջ 163):

Այս ամէնը գալիս է վկայելու, որ վիպասանը կատարել է աւելի բառային, պատկերային, քան բովանդակային շտկումներ, անուղղակի ընդգծել ժամանակի գործօնի «երկարածգումը» առնուազն եօթը «լրացուցիչ» տարիներ, հասել երուաւաղէմի շրջան: Այս հանգամանքը խորհրդանշում է գրողի հայեացքի ամրութիւնը՝ շուրջ 40 տարիների լրջագծով: Ազգային շարժման ելքերի շուրջ մտածումների անփոփոխութիւնը բերում է անկանիսակալ մօտեցման իւրայտեկութիւն, որ պահել է մինչեւ մահ: Նա չէր ընդունում Արեւելքից եւ Արեւմուտքից «ներմուծուած» զգատագրական պայքարը այն պատճառվ, որ այն օտարամուտ էր, ծառայում էր ուրիշ տէրութիւնների շահերին, բացառում էր այդ պայքարի մէջ ժողովրդին ճանաչելու առաջնայնութիւնը: «Մեր յե-

դափնիսականները անշուշտ ինձի պէս զիտէ նը չէին զար: Անոնք գաղիացի էին, ոռու էին, գերման էին, անգլիացի էին: Բայց մեր ժողովուրոր՝ հիմնալին արեւելք: Աս էր, որ չկրցանք զգալ» (Նոյն, էջ 12): Մաթիկը դրա վկայութիւնն էր՝ Հակառակ Համակրական գծերի որոշ առկայութեան: Նման արտառոց գնահատական Օշականը տալիս է Աղէտի փրժումի պատճառների առթիւ, որի ողբերգականութեան խորքում նա տեսնում էր նաև «գրական» սրուած զրդապատճառի յայտնի տարրը, ինչը երեւան էր Հանել դեռ 1923ի Յունիսի 17ին Գեղամ Գաւաֆեանին (1888-1959) ուղղած նամակում: «Երբ ցեղը գրականութեան համար զոհուեցաւ (բանի որ գիրքերն ու գրողներն էին, որ այս աղէտը թերին, - նետում է անմիջական պոռթկումի պաշին Օշականը, - քաղաքացիական բազուրին է հաւաքել թեկորները, կենալ մնե փախտասի դէն ու դիմանալ» (Հուսատուներ. Սաները Կը Յիշեն, Փարիզ, Կեղրոնական Սանուց Միութիւն, 1996, էջ 28):

<sup>3</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսաննեան, էջ 9:

Մացորդաց վկաչարից հինգ վէպերի առանձնացումը (առաջին երեքը պայմանաւորուած էին թուրքական միջավայրի սեւեռուն ընտրութեամբ և թուրքի՝ գրականութեան մէջ եղած բարդոյթի յաղթահարման ճիգով, յաջորդաբար՝ Համի Մուլրատ, Համի Ապտուլլահ, Մուլչյաման Էֆենաթի) եւ ինքնուրոյն գրական «չնչառութեան» պարգևեումը գեղագիտական յատակ ծրագրեր են գառնում արձակագրի համար, ուր չորրորդը արդէն 1930ականների առաջին կէսին կեանքի կոչուած Մաթիկ Մելիքիսաննեանն էր՝ Օշական Պարգեւեանից անմիջապէս առավ:

Գրական ստեղծագործութիւնների նման վերակազմակերպումները Օշականի համար ուսուցիչ-բարոյագէտ Օնորէ Բալգակից (1799-1850) եկող մտահոգութիւնների շարք էին, ուր իրեն Հետաքրքրողը ներքին միասնութեան և երկի խորքային բովանդակութեան համամանութեան պաշտպանութիւնն էր, նախորդ վէպից ածանցուող, խմորուող, փայփայուած արժէքներին ինքնութիւն Հաղորդելու տարերային պատգամը: «Պալզագ «Մարդկային կատակերգութիւն» անուանեց իր մեծոյի կառոյցը, - գրում էր նա, - ու չէր կասկածեր, որ այդ 1840ի Ֆրանսային իր սեւեռածը որքան քիչ բան էր խորքին մէջ: Պահ նը փորձուեցայ մնե Վարպետին հանդէպ սերէս նուածուած իմ շարքը ենթատիտդոսել «Մարդկային տուամա». թէև իրաւ, բայց նաշած է այսօր տարազը, այնքան ազգովին ու անհատապէս մեր ապրածը կը զիտ, կ'անցնի բառով ընդգրկելի իրողութիւններէն: Ինչ շարքը կ'ուղղուի իմ ժողովուրդին, այսինքն՝ կը զգտի իմ ժողովուրդիս մէկ զաւկին ջիղերով պատ պատ կազմուած ցաւին ծովը թելադրել» (Յակոր Օշական, Գեանքին Պէս (Հեքիաթ Մը Մեր Ժամանակներէն), Հայր. Առաջին, Լու Անճելըս, 1995, էջ 5):

Ընդ որում՝ դա վերաբերում է նաև կեանքի վերջին շրջանում փաստօրէն անաւարտ թողած կեանքին Պէս վէպին, որը ինքը Հեքիաթների շարք էր անուանում, որի Դրդ գլխից սկսած՝ արդէն տարանջատում էր երկը նոր խորագրի ներքոյ՝ Թակի Օքանքը Տպագրութեան առումով այն կարծես աւելի քախտաւոր» եղաւ՝ լոյս տեսնելով Պէտրութի Ախօս Հանդէսի 1953ի ութ համարներում:

<sup>4</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսաննեան, էջ 10:

<sup>5</sup> Եւ երկու անգամ էլ ընդգծել է կերպարի խոր վաւերականութիւնը: «Կը յայտարարեն, թէ ան հնարովի անձնաւորութիւն նը չէ վիպային (արստեղ՝ գեղարուեստական, այլ ոչ ռոմանտիկական իմաստով - Ս.Դ.) գործողութեան նը համար յդացուած եւ հանդերձուած: Թէ ներկայ հատորը (Մաթիկ Մելիքիսաննեան վէպը - Ս.Դ.), թէ Մարիկին պատկանող Մացորդացի մասերը կը պատմեն ստոյգ իրողութիւններ, որքան վաւերական անձնաւորենանց ապրումները, անշուշտ ենթարկուած որոշ վիպայնացման» (Նոյն):

<sup>6</sup> Նոյն:

<sup>7</sup> Վէպում Հեղինակը խորապէս գիտակցում է իր հերոսի մեկնական քննութեան զուգահեռ Փանջունու հետ և այն բացատրում ակնյայտ պաշտպանութեան տակ առնելով իր հերոսի գարքագիծը, ընդգծելով նրա իմացական առաւելութիւնները, բնականաբար, համեմատական կարգով, ընդհանրական գծերի խնամուած «Հաշուառումով». «Օտեանի տիպարը (Ծալվար) չնմ կրցած նախզգալ Մարիկին մեջ, որ աւելի պարկեցած էր, քան յետսածին միս դժբախտը, համալսարանին ինկած, մէկ-երկու տարի անոր սեղանները, սրահները ծանծրացնելէ նոր ու ինկած նոյն ատեն տրումին, որ մեծ զաղափարներուն գրին էր, այս դարուն սկիզբը, մեր ուսանողներուն» (Նոյն, էջ 149). Ուշադրութիւն դարձնենք, որ երկուսի պարագային Օշականը չի խուսափում նրանց միասին Հեղինախառն «յետսածին դժբախտ» կոչել եւ աւելին. նա որոշակի հերոսից «այն կողմէ տեսնում է «փանջունիական» տիպարը՝ «... շատ աւելի խոր ու իրական, որքան չէ սեւեռուած Փանջունիով» (Նոյն, էջ 99).

<sup>8</sup> Նոյն, էջ 15:

<sup>9</sup> Յ. Օշական, «Հարթենք – Հրանդ Նազարեանց», Մեհեան, Պոլիս, թիւ 1, էջ 9:

<sup>10</sup> Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 12:

<sup>11</sup> Պատմութեան վաղ շրջանից անգամ նա շարունակում է որոնել «մեղաւորների». առաջինը վերհանում է Ազգապատուօթի Հեղինակ, նոյն Արմաշի դպրեվանքի հիմնադիր Մազաքիա Արք. Օրմանեանի եկեղեցու պատմութեան «վերակազմութեան» փորձը՝ «...գորուած առանց ոճի, առանց հոգիի, պարզ անուններու եւ բուականներու խաղարկութիւն» (Նոյն):

<sup>12</sup> Հետաքրքիր է երկու Դուրեհանների գուգակշիռը, որը կատարում է Օշականը ճիշդ Մաթիկ Մելիքիստանեանի շրջանին «Զուգակշիռ Արեւելահայ եւ Արեւմտահայ Գրականութեանց» դասախասութիւնների ընթացքում. «Անշուշտ, համալսարանը ոչինչ պիտի աւելցներ [Պետրոս] Դուրեհանի մը, քայլ միջազգային արժեքով դեմքի մը պիտի վերածէր Եղիշշ «Դուրեհանը» (Յակոր Օշական, Զուգակշիռ Արեւելահայ եւ Արեւմտահայ Գրականութեանց, Պէլլութ, 1999, էջ 228-227). Այսինքն՝ վաղամեռիկ գերիթողը ընութեան հանճարն է, իսկ իր ուսուցիչը եթէ յղկուէր, միջազգային մեծութեան կը ձգտէր: Պէտք է կարծել, որ այս գնահատութեան մէջ վրիպում է աշակերտը: Դուրեհան Արքի «Համալսարանները» կայացել էին չի՞ որ ինքն է վկայում, ուսուցչի սենեակում արցունքն աչքերին նայում էր «Ուղնանին, Սննը Պետովին, Թէնին, Չոլային քամիններուն, ամէն մէկը քամնէն վեր հասորներով» (Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 140): Զեռք էր բերել, ուրեմն ինչու չմտածել, որ կարդում էր: Բանաստեղծ եղբայր Պետրոսը այդ համալսարանի հնարաւորութիւնը չունեցաւ, քայլ դարձա՛ւ: Ուրեմն իրական տաղանդի ինդիքը է ոչ-«Համալսարանական» լրումը: Պատահական չի, որ կեանքի վերջին տարին նա շատ աւելի ջերմութեամբ է քննում Դուրեհան Արքի դերը: Նրան դիտելով յետադէմ ուժերի դէմ պարբարի եղած արեւմտահայ Եկեղեցականութեան բարձրագոյն իմացականութիւններն մէկը» (Յակոր Օշական, Արեւելահայ Բանասիրութիւնը Եւ իմարտինեն: Գարեգին Կաթողիկոս Յովհանքին, Անթիկիա, 1948, էջ 31): Նոյնն է, ի դէպ, յարաբերութիւնը Մեծարենցի եւ Երուսալիմ (1870-1915) միջեւ: առաջինը բնաբար է, երկրորդը կարօտ էր հիմնաւոր զարգացումի՝ բնաբարը հասկանալու համար:

<sup>13</sup> «Աւելի վերջը, - անկեղծանում է բարքագիրը մատենագիրների վերարժեւորման ներքին պահանջի առիթով, - մատենագրական հետարրբութիւններ պիտի յաջողութիւն սրբազնել պատանեկան այդ տպատրութեանց անարդարութիւնը, ու նու պիտի հասկնայի մեր մատենագիրները՝ իրենց բոլոր մեղերուն հակառակ, դարձեալ իրը վկայութիւններ՝ միշտ իմ ժողովուրդեւ, զոր իր դժբախտութիւնը կ ընէր կրկնապէս սրտառու ու յանկուցիչ» (Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 12):

<sup>14</sup> Նոյն, էջ 14:

<sup>15</sup> Նոյն, էջ 41.

<sup>16</sup> Հեղինակը մի թաքցնում իր այլամերժութիւնը դէպի շարժման ու պայքարի յայտնի գործիչները, դէպի «...խստ, հաստ (թի վերի տողերում նաև՝ «փայլատ» ու «տաժան» - Ս.Դ.) այդ մարդերը, նոյնը՝ Մարիկին ալ պատմումն, որոնք իրենց նկարագիրը հարկադրած էին հայ յեղափոխութեան, զայն մասնաւորելով, իրենց միայն սեփական կազմակերպութեան մը վերածելով» (Նոյն, էջ 183).

<sup>17</sup> Նոյն, էջ 180.

<sup>18</sup> Օշական, Զուգակշխու, էջ 227:

<sup>19</sup> Օշական, Մաթիկ Մելիքյանեան, էջ 181.

<sup>20</sup> Նոյն:

<sup>21</sup> Նոյն:

<sup>22</sup> «Երջանկութիւնս մեծ նղաւ, երբ հաստատեցի թէ դուն կը մտածես ճիշդ այն, ինչ որ ես կը մտածեմ մեր «յեղափոխականներու» գործիմ նասին: Եթէ զիտնաս թէ քանի՞՝ քանի զիշերներ, խմբուած փարիզեան սրճարանի մը մեկ անկիւնը, մենք դատապարտած ենք այդ գործը, ճիշդ քու քառերով - «արդիւնքը», «հետեւանքը» (Շահն Շահնուր, Նամականի, Հոր Երկրորդ, Նամակներ Գուրգէն Մահարիին Ըւ Անդրանիկ Անդրէասեանին (1909-1989), կազմ., խմբ. եւ ծանօթ՝ Գրիգոր Քէսուէկան, Պոլ-Թըրթառւն, 2004, էջ 74):

Քաղուածքում կրկնակի, նշանակում է՝ անթաքոյց զայրոյթ կայ՝ արտայայտուած Շահնուրի վերբերած «գործ» քառի մէջ, որը բնագրում (ձեռագիր թէ տպագիր) չեղադիր է: Այսինքն՝ դարասկզբի շարժման կամ «յեղափոխական» տարերքի հետեւանք գործը, ըստ երեք խոշորագոյն գրիշների, համազգային ձախողում էր, մտքի աղէտ, որ առաջ բերեց 1915ի «գժուիքի համբան» Աղէտը:

<sup>23</sup> «Օշական արհամարիելի իմացականութիւն մը չեր բնաւ, - գրում էր նա Յօականների կէսերին Մահարուն Սան-Ռաֆայէլից 1966 Դեկտ. 20ին յղած նշանաւոր նամակում, - քայց իր ննրադրեալ «զեղագիտութիւնը» բունաւորած էր ամբողջ սերունդ մը: Ծը զիտեր, թէ զեղեցիկը կը կայանայ պարզութեան մէջ: Իր բոնագրուիկ եւ անհերեր պատկերները կ'արտայայտէր այնպիսի՝ դարձդարձիկ եւ ոլորապույտ նախադասութիւններով, որ նս զինքը անուանած էի Հօնա...» (Նոյն, էջ 49):

Ի դէպ, նամականու խմբագիր Քէսուէկանը յիշատակում է Յօականների վերջին Ապացայի մէջ Շահնուրի տուած համանման, քայց աւելի խիստ ընութագիրը Օշականին՝ «կեղծ խօնա» (Նոյն, էջ 171), ինչը վկայում է, որ տասնամեկները գոյզն իսկ չեն փոխել գրողի հանդէպ Փրանսահայ արձակագրի՝ գրեթէ ժիտական կարծիքը:

<sup>24</sup> Շահն Շահնուր, Ազատն Կոմիտաս եւ իրր Յաւելյագիր Վաղը, Երևան, ՀԳՄ Հրատ., 2003, էջ 8:

<sup>25</sup> Նոյն, էջ 6:

<sup>26</sup> Թէքէեանի քնարական հերոսի բանաստեղծական ճակատագիրը «Հայ Ազգին» ծօնում («Երեք Զօներ»ից երկրորդում) 1920ականների կէսերին ներկայացնում է առօրեայից դէպի անէացում ու խոտագնացութիւնը:

Քայց շափականս, քայց մնծցած մարդն յամատի՝ տակալին

Տողեր քաշել ու յանգեր զամել ետել ետել

Ու կախել վար անոնցմ մորք կանքեներն իր սրտին...:

(Վահն Թէքէեան, Մէր (Թէրթուածներ (1919-1933), Փարիզ, 1933, էջ 6):

<sup>27</sup> Շահնուր, Ազատն Կոմիտաս..., էջ 10:

<sup>28</sup> Նոյն, էջ 8:

<sup>29</sup> Օշական, Արեւելյահայ Բանասիրութիւնը..., էջ 33:

<sup>30</sup> Ֆրանսահայ արձակագիրը գրում է Կոմիտասի միջավայրի՝ իրրեւ ճակատագրի վերջնական ընտրութեան մասին: «Հանճարը կրնայ ճնիլ զաւադի խորը, քայց մայրաքանը է որ զայն կը նուիրագործէ: Ան է որ կը տարածէ համրաւը ըլլալով արձագան-

գիշ բնրուկ (caisse de resonance), Եւ մեր մայրաքաղաքը Պոլիսն էր: Պետք է ցանիլու որ այս այսպէս էր: Բայց մնորք Պոլիսինը չէ, երբ կովկասահայ զանգուածը մնացած էր ուսամոլ, ծիծաղելի սնոպիզմով ու անպատրաստ, իր ցրուածութեան մըն իսկ, բնրուկի գերին: Սիմոն Վրացեան (1882-1969) կը վկայէ թէ Վարդապետը ստիպուեցաւ խոյս տալ Կովկասէն ու Վանքի հեղձուցիշ մընուորտէն» (*Շահնուր, Ազատն...*, էջ 15):

<sup>31</sup> Օշական, Զուգակշիռ Արեւելահայ, էջ 85:

<sup>32</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսանեան, էջ 23:

<sup>33</sup> Նոյն, էջ 23-24:

<sup>34</sup> Ցովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար Ժողովածու 10 Հատորով, Հար. 3 (Պօքնենք), Երևան, ԳԱԱ Հրատ., 1989, էջ 73:

<sup>35</sup> Նոյն, էջ 70:

<sup>36</sup> Նոյն, ընդգծումը մերն է:

<sup>37</sup> Նոյն, էջ 74:

<sup>38</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսանեան, էջ 88:

<sup>39</sup> Նոյն, էջ 88-89:

<sup>40</sup> Նոյն, էջ 89:

<sup>41</sup> Տե՛ս Շեւոն Շանթ, Երկեր, Ա. Հատոր, (Գեղարուեստական Գրութիւններ 1891-1894), Պէտութ, 2008, էջ 349:

<sup>42</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսանեան, էջ 225. ընդգծումները հեղինակինն են:

<sup>43</sup> Նոյն, էջ 55:

<sup>44</sup> Այդ ճանապարհին նա, հեղինակի «վկայութեամբ», պիտի անցնի «Կարին: Յեսոն»: Անշուշտ, դեպի արեւուստը, երկշախիդ ուղեցոյցով Սերաստիա ու Կեսարիա: Փոքր Հայրը նանապէս անիկա ենթարկելու էր շատ խղճամիտ ուստմնասիլութեան, միշտ նոյն մերուտներով» (Նոյն, էջ 241-242): Բայց շահեկանութիւնն աննշան է. նա այդպէս էլ մնում է անհաղորդ իր ժողովրդին. «Ան չէր ճանշնար Վասպուրականի և Տարօնի հասարակ ժողովուրդը: Դեպի Կիլիկիա իր փախտադր ծանօթ է ձեզի, բորբերն իր զգայնութիւններով: Դեպի Կարին անիկա զարմանար պիտի՝ նոր աշխարհի մը ինչպէս» (Նոյն, էջ 242):

<sup>45</sup> Նոյն, էջ 98:

<sup>46</sup> Իսկ Օշականի մեծութիւնը նորերին ակներեւ էր եւ այն էլ՝ դեռ 20ականներից՝ քննադատական մօտեցումներին զուգընթաց: Շուշանեանը, հզօր կանիսատեսող էր. նա որսում էր ուսուցիչ քննական հայեացքի լոյսն ու ստուերը, բայց գիտակցում էր՝ լոյսը գերակշռում է: Այդ Համադրութեամբ էր 1926ին, գրական իր առաջին քայլերից արդէն, խորութեամբ գերհանում Օշական ուսուցիչ ու առաջնորդի հանգամանքը, երբ դեռ չէր էլ սկսուել վերջինիս կիպրոսեան շրջանը, լոյս չէր տեսել գրական եւ գիտական հատորների մտուար մասը. Ահա այդ ժամանակ ֆրանսահայ արձակագիրը հաստատում էր. «Օշական մնայի երիտասարդներուս սորվեցուց կշռն մարդիկը մեր ավելուն մէջ: Սորվեցուց կշռել կ ըստն, որովհետեւ չենք ընդունիր յաճախ իր բերած կշիռը: Օրինակ, Թումաննանի տուած իր ծանրութիւնը բերեւ կը գտնենք: Իսկ Զարենցինը՝ ծանը: Օշական սորվեցուցած է նաև մեզի, մնար, որ վարպետ չենք ճանշնար, կատաղութեամբ ու առանց ընկրկումի կոտիլ յանուն գեղեցիկին, տապալել սուս աստուածները ու հայիոյել կատաներուն: Օշական մեր անմիջական երեցն է: Ան է, որ պետք է առջեւն քալ: Գլուխը բարձր մեծ յաղթանակին համար: Ուսերը ընկանաւոր բանաստեհութեան անփոխարիմնելի հարասուրեամբը: Կեցցէ Օշական» (Նաւասարդ. Պարբերական Գրականութեան Եւ Արուեստ, Պուբլիկ, Բ. տարի, թիւ 11, Մայիս, 1926, էջ 310):

<sup>47</sup> Օշական, Զուգակշիռ Արեւելահայ, էջ 92:

<sup>48</sup> Նոյն, էջ 93:

<sup>49</sup> Մուրացան, Երկերի ժողովածու 7 Հատորով, Հայր. 6, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 165:

Մուրացանի եւ Օշականի հերոսները առաջնորդուելու են հին իմաստնութեամբ, որ խնամքով ուղղորդում է նրանց ճեմարանի նախկին սան, այդորուայ ժողովի նախագահը՝ «Կամ կը զտնեմ ճանապարհը և կամ ինը բաց կ'անեմ» (նոյն): Մուրացանն առաջինը մատնանշում է հերոսի (նման հերոսների) ապագայ գործունէութեան ծրագրերը, որոնց տակ սիրով կարող էր ստորագրել նաև Օշականի հերոսը («Գիտական հասարակութեան իրաւունքների պաշտպանութիւնը», «Պուսաւորութեան գործի հիմնադրութիւնը», «Գիտացու տնտեսական դրութեան բարություն», նոյն, էջ 168 - ընդգծումները հեղինակինն են): Պետրոսը գիտակցում է կեղեքիների «ղիմաղրութիւնը» տեղերում, մինչդեռ Մաթիկը խուսափում է տեղական ցեցերի հետ շփումներից: Պետրոսին հարստահարիչները գիւղից վանդելու եղանակը գտնում են, մինչդեռ Մաթիկին իրեւ «յեղափոխական» յանձնում են թուրքերին: Պետրոսը երկու-երեք օր չի ղիմանում, Մաթիկը աւելի յամառն է՝ առաքելութեան թելազրութեամբ ղիմակայտութիւնը երկու շաբաթ է արեւմտահայ թշուառ մէկ տեղում: Հերոսների տարրերութիւնն ակնրախ է՝ Մաթիկը ընտրում է փախուստներով լի քաղաքական նահատակութեան ուղին, իսկ Պետրոսը՝ գաղափարներից դէպի փափկասուն կեանք զարձը: Երկու հերոսների համար հեղինակների ընտրած լուսարանման եղանակն այնուհանդերձ մնում է նոյն երդիծական յատակագծի սահմանագծում:

<sup>50</sup> Բնականաբար, հեղինակը նկատի ունի ոչ միայն Մարմարնը գիւղը, ուր ինքը աշխատել է իրեւ ուսուցիչ, այլև Բութանիայի արգասարեր շրջանն առհասարակ: Հեղինանքը դրսեւուում է եւ բառերի ենթաշերտերում, եւ այն վերաբերմունքում, որ համահունչ է հեղինակի ժխտական ծաղրական ոճին: Հէ՞ որ ինքը Մաթիկ հերոսից հազար անգամ լաւ գիտի այս աշխարհը, հազար անգամ նաև աւելի է սառապում, քան իր երկարաթեայ հիւրը:

<sup>51</sup> Օշական, Մաթիկ Մելիքիսանեան, էջ 90:

<sup>52</sup> Նոյն - ընդգծումը մերն է:

<sup>53</sup> Նոյն, էջ 240: Ի հարկէ, այդ ամէնը միայն քրնկերգարական համաշխարհային յեղափոխութիւնը» կատարելուց յետոյ՝ «Կարինը, Սանասարեանով, այս ոգիին կապուած գաղափարազրութեամբ, յեղափոխութեան վերանորոգից շունչին տակ Հայաստանի ապագայ տնտեսութեան մեծ կերպո նը՝ որ իր լեռնային նկարագլուք հարկադրեր մեզի, մեզ ընելով Արեւելի Ծվեյցարիան»:

<sup>54</sup> Նոյն, էջ 98:

<sup>55</sup> Նոյն, էջ 85:

<sup>56</sup> Նոյն, էջ 101:

<sup>57</sup> Նոյն:

<sup>58</sup> Հեղինակը չէր կասկածում ժողովրդի համար Մաթիկի զոհողութիւնների, նահատակութեան գնալու վճռականութեան, նպատակի ազնուութեան վրայ՝ «արզասաւորել, շատ աւելի առասորդն օգտակար դառնալու համար իր ժողովրդին... հետզհատ նոյնանալու համար գիւղացին, բանուորին՝ իրը տարագ, ապրում ու հոգերանութիւն» (նոյն, էջ 20):

Իրեւ անձնաւորութիւն՝ Մաթիկը մաշից յետոյ եւս պահպանում է հմայքի, վեհութեան ոյինազգութիւնը, կենդանազիրը իրեւ հատընտիր նմոյշ սերունդէ մը, որուն բարոյական շնորը անձանօք է մնացած տաճկահայերուն, գրնէ անոնց, որ կ'իյնան Ալիսէն (Դանիէլ Վարուժանին այնքան ընտանի բնաշխարհիկ գետը - Ս.Դ.) ասդին [դէպի արեւմտուք]» (նոյն, էջ 104-105):

<sup>59</sup> Նոյն, էջ 27:

Գրողը խստովանում է, թէ այդ ոճը պարտադրուած է իրեն, ինքը ոչինչ անել չի կարող, այսինքն՝ իր ու ընթերցողի միջեւ չցուող պարապ կայ, որը յաղթահարելու է ոչ

<sup>11</sup> Ինքը՝ «Դժբախտ արինստ մըն է գրելը: Որքան բան կը զոհէ ան, գրողը՝ որպէսզի մատշելի մնայ ընթերցողին ժամանակացոյցին, աւելի յաճախ ճաշացուցակին, մարտուրեան խորհուրդին» (Նոյն, էջ 27-28), Ընկարման մէջ ընթերցողի քաղաքական գարդացման աստիճանի մակարդակի մասին հեգնախառն, բայց թափանցիկ ակնարկն է:

<sup>12</sup> Մուրացանի խեղճ, բայց նաև տգէտ ուսուցչի վիճակին ընկած, ակամայ նեղ կացութեան մատնուած արեւմտահայ ուսուցիչը կանխազգում է կարծես, թէ ինչպէս են գիւղացիները արգահատանքով չափում իր քրտինքը, քանի որ բարձրածախ «յամինանող վարժապետի մը խստորեամբը», «արհամարհանը մէջ մոկ մը խորող տողու պայջառութեամբը» Մաթիկը անփութօքէն նետում է իր՝ առարկութիւն չվերցնող դատապարտութիւնը՝ «Ասացէր խսդրեմ, որ ուսուցիչ էք, ի՞նչ ունեք արած... Սրանը խի չեն խանում՝ ո՞վ է Խրիմեանը» (Նոյն, էջ 77).

<sup>13</sup> Նոյն, էջ 278.

<sup>14</sup> Նոյն, Գրականութեան Համար, աշխատ.՝ Գրիգոր Յակոբեան, Երեւան, Ազգային Պալատի Հրատ., 1997, էջ 46-47.

<sup>15</sup> Նոյն, Մաթիկ Մելիքիսեան, էջ 110.

<sup>16</sup> Նոյն, Արեւելահայ Բանասիրութիւնը..., էջ 31 - ընդգծումները՝ Հեղինակինն են:

<sup>17</sup> «Լիպերալիզմն դեպի աս [մտաւրական] դասակարգը անցը բնական է: Բառին բախտը շատ աւելի ընդարձակ է ուսւ գրականութեան մէջ եւ հրաշալի սեւեռումներու պատրուակ եղած է (Տոսրուելիի գործին մէջ զգեցած կարկառը անմոռանալի է եւ անօնչելի)» (Օշական, Չուզակչյան Արեւելահայ, էջ 210): Այս հարցադրումը, ի դէպ, մօտեցնում է երկու խոշոր արուեստագէտներին մտաւրական աշխարհի եւ ազգային-քաղաքական ընդհանրութիւնների գեղարուեստական ընդգրկումի առումով, ինչի վկայութիւններն են Աշակերը եւ Մաթիկ Մելիքիսեանները:

<sup>18</sup> Ի հարկէ, ոռւսական մշակոյթի ներկայութեան կողքին Օշականը չէր կարող չտեսնել, իր պարզ բառով, ոռւս բռնապետութիւնը, «Սիսերիայի սառերը», բայց այն համեմատելի չէր թուրքական վայրագ, անարզ քաղաքականութեան հետ, որը քաղաքակրթութեան տարրական իմաստների հետ շփոթել չէր կարելի. «Անծանօթ չէի Սիսերիային, բայց ունեի բաւական հասունութիւն բառը զետեղելու իր ճիշդ ոլորտին մէջ: Թուրքիոյ մէջ Սիսերիան ամէն զիսլի սահմանէն կը սկսէր» (Օշական, Մաթիկ Մելիքիսեան, էջ 115-116): Ասուած է «որոց», բայց թուրք-ռուս լարաբերութիւնների խոր ճանաչողութեամբ:

<sup>19</sup> Կիմ Ազարեկեան, Յակոր Օշական (Մտեղծագործական Աշխարհի Աշակեւներում), ԵՊՀ Հրատ., Երեւան, 2006, էջ 213.

<sup>20</sup> Նիհիլիզմի կերպաւորման ներքին պահանջը գալիս է նոյն Դոստուսկուց, որն ամէն առիթով փորձում էր ընդգծել, թէ նիհիլիզմը յեղափոխութիւնը կեանքի կոչելու ազգակներից է, թէ Գրանօվսկին արդէն նիհիլիստ է, նիհիլիզմի առաջին տեսարանը ԺԹ. դարի ոռւս իրականութեան մէջ:

<sup>21</sup> Արձակագիրը թոյլ է տալիս իրեն տրուելու փիլիսոփայական խորհրդածութեան, մաշնուան դասողութիւնների առեղծուածին: «Մահը.- զրում է նա՝ կարծես արձագանքերով Թէքէհանի Ալահուան Տաղերի» շարունակական ներքին իմաստներին, ամէնն խոր փորձառութիւնն է կեանքին, պայմանով, որ ասացուածէն զեղուի բաժնը կրօնըներով, գրականութիւններով, արուեստներով անոր ներսը զետեղուած հասարակ տեղիրէն: Զայն կ'ապրինք անշուշտ թիզ նը ամէն օր եւ ամէն տեղ: Բայց շատ թիշերու վիճակուած է ճակատ ճակատի կենալ անոր հետ: Մահը դառնագոյն փորձառութիւնն է, որուն բուրայէն անցնող ողջն է միայն, որ կը հասկնայ անոր ահաւոր ստեղծուածք: Ոչ մէկ բնագանցական շահաբերուն աս տողերուն ետին: Ոչ մէկ փարատորսեալ նրբախուզութիւն, որուն ճամբով երբնն խորհուղներ կեանքի պատկերներու կը հասնին: Բայց զայն [ ճահուան էութիւնը ] լիովին զգալու համար

անհրաժեշտ է հասուննայ, գեղացին կ'ըսէ՝ զաւակ մը բաղած ըլլալ» (Օշական, Մաթիկ Մճիջիշխանեան, էջ 120-121 - ընդգծումը հեղինակին է):

Օշականը պարզ ժողովրդական ասացուածքի եւ երջանկութեան բեթհովէնեան յայտնի բանաձեւի («Երջանիկ կարող է լինել դժբախտորեան բուրայով անցածը») միջեւ նրբօքէն անցկացնում է Հասարակաց իմաստութեան լարը:

70 Նոյն, էջ 16:

71 Նոյն:

72 Հայրենի դրականագէտ Գրիգոր Յակոբեանը, ով օշականեան բնագրի հմուտ մեկնիչներից էր, Գրականութեան Համար տեսարանական ուսումնասիրութեան առանձին տպագրութիւնը պատրաստելիս ընդգծում է Օշականի մարտնչող գրիչը գրքի «Յաղթարան Հերքում (Քննադատութեան Միատերիան)» վերջաբանում. «Օշականի ցանկացած բննադատական գրութիւն, յօդուած, գրախօսութիւն և ոստինասիրութիւն, զարտուղած բննարանուրեան հայկական «սրբացուած» կադապարներից, գրական ընթացի, հոգեւոր-իմացական կեանքի «զայրակողութիւն» եւ (այստեղ՝ Հակագդեցութիւն - Ա.Դ.)՝ յարուցած բանավէներով և կամ լուրեամբ, անտեսումվ» (Յակոբեան, Գրականութեան Համար, էջ 48). Նա Հակադրւում էր վիպագրի ոչ-թելադրական համեստութեանը, երբ վերջինս ծայրակէտերի հասցնելով իր՝ վիպողի (նաև թատերագրի) ու քննադատի բեւեռները, այն կարծիքին էր, թէ գեղարուեստական արտադրութեան մէջ «չէ իջած ժողովուրդին», իսկ մեկնիշի պարագային՝ ինքը «փրական զայրակողութիւն ե», այսինքն՝ ըմբռուտ, միշտ ներքին խոռովգի մէջ:

Օշականը գիտական թէ ճանաչողական իւրաքանչիւր զաղափար հաստատել է պայքարով, մաքառումով: Նա հայ իրականութեան մէջ ընկերային մտքի վերակառուցման մեծագոյն յեղափոխականներից էր: Առաջին հերթին դա նրան ստիպում էր ազատութեան խորհրդին հասնելու աճապարանօք ու վտանգաւոր ճանապարհները մերժել, քանի որ ուղղողներում դեռ շխմորուած ու տարերային պայքարը նոր հասարակարգին անպատրաստ, ազգային միասնական կեցութեանն անհաղորդ միջավայրում դլի է անդառնալի կորուստներով: Աչա թէ ինչու նա հաւասար ուժով պայքարում էր թէ յեղափոխութեան գորիները կուրօքէն նետուելու ձգտման, թէ այդ պայքարի պատրաստութեան ազգային գրական նախահիմքների դէմ:

73 Գրական սկզբունքային բանավէճի ծաւալները, մեթոդներն ու եղանակները մեզ տանում են վերստին Դոստուեսկու աշխարհը, որը «Այսաւարը» վէպում անմիջապէս արձագանգում է ուսւ եւ արտասահմանին գրամշակութային նշանաւոր իրադարձութիւններին: Իսկ այդ տարիները խորապէս շահագրգուռ էին արտասահմանում ապրող վիպասանին: Հպանցիկ նշենք, որ հենց այդ շրջանում Հրապարակ իջան ուսւ գրականութեան հրաշալի կոթողներ գարճած Տոլստոյի Պատերագմ Ծ. Խաղացութիւնը, որի հանդէպ վերապահումներ են հնչում Դոստուեսկու շուրթերից, թէ այն էկարուածատիրական գրականութեան նոյն նմուշն է, Միխայլ Սարտիկով-Շենդրինի (1828-1889) Մի Քաղաքի Պատմութիւնը, որով աւարտում է գլուպովիկան պատմութիւնների շարքը: «Այսաւարը» հերոսի սեղանին կարելի է տեսնել անդամ Հիւգոյի Մարդը, Որը Միջադում է՝ 1869ին լոյս տեսած վէպը: Այստեսկու չէ նաև Հիւպոլիտ Թէնի (1828-1893) Գեղարուեստի Փիլիպոփայութիւնը՝ գրուած 1865-1869ին: Այս ամէնը վկայում է «Այսաւարը» հեղինակի գրական լիշողութեան եւ թարմատի վէպերի ճանաչողական նորագոյն խաղարկումների շնորհը, ինչը յատկանիշ է նաև Օշականի համար, որին թանկ են յիշատակուած հեղինակներից շատերը:

74 Ճշմարտութիւնն այն է, որ ուսւ գրականութիւնը 1917ից «անդին ալ», դեռ պուշկինեան շրջանից, ընկերային տագնապներ ունէր, որոնք խորացել էին ժթ. դարի երկրորդ կէսին, հասել գրավերջ, հատել նոր դարը:

75 Յակոր Օշական, Նամականիք, Ա. Հատոր, Պէտրութ, Տալ. Ալթափրէս, 1983, էջ 88. ընդգծումները հեղինակին են:

<sup>76</sup> Օշական, Արեւելահայ Բանասիրութիւնը, էջ 162:

<sup>77</sup> Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 99 - ընդգծումը Հեղինակինն է:

<sup>78</sup> Պոլսից Պէյրութ անցած Մանուկ Արտանեանը (1892-1944) հիմնում, աւելի ճիշդ՝ վերակազմում է Ազգարարը իրեւ շարաթաթերթ, ապա օրաթերթ (1942-1955), ուր 1950ականների սկզբին, մէկ տարուայ ընթացքին (1951ի Դեկտեմբերից 1952ի Նոյեմբեր), լոյս են տեսնում Օշականի Զուգակչիա Արեւմտահայ Եւ Արեւելահայ Գրականութեանց՝ աշակերտութեան Համար Յօականներին կարդացուած դասախոսութիւնների շարքի թեմատիկ բաժինները՝ «Հանդիտութիւններ», «Անհանդիտութիւններ», «Մասնաւոր Սեռեր», «Վէպը», «Քատրոնը», «Քննադատութիւնը», «Պատմութիւնը», «Համադրութիւն», յաջորդական ներկայացումով: Այս 1989ին Պողոս Մնապեանի անմիջական ջանքերով Պէյրութում լրյու է տեսնում առանձին գրքով:

Արեւելահայ եւ արեւմտահայ բնագրերի գեղարուեստական եւ գաղափարական ընկալումների իրայատկութիւններից Օշականը հաօնում է «արուեստի զգայարանը» Հակագրութեան արմատին, որը միայն արեւմտահայերի Համար առաւելութիւն չէ իր կարծիքով: «Թէեւ հոս ալ խորերն կը միջանտ երկու գրականութեանց հակամարտորինը ստեղծող հիմնական նորինը. բայց կ'ուզեմ օգուտի եւ անշահախնդիր ստեղծումի մեծ քննրասրը, որը կ'երևայ մնը զոյզ գրականութեանց սեռներուն ալ մեջ: ...Ստոյցն այն է, որ մեր տեսակետները տրամագծօրեն հակատակ էին անոնց [արևելահայերու] տեսակետներուն» (Օշական, Զուգակչիա, էջ 166 - ընդգծումը Հեղինակինն է):

<sup>79</sup> Նախ, սոցիալական ու քաղաքական անկախութեան գաղափարը, իր վկայութեամբ՝ ածանցուած արեւելահայ գրողներ Մաֆֆուց եւ Գամառ Քաթիպայից (1830-1892), ինչպէս «...երազը, ցարդ ապրած է զիրքերու մեջ զերմացուած ծաղկին նման: [Շնատի] յեղափոխական սուրբ, ամյեւտածգելի գործ է զայն փիշադրել ու տնկել զանգուածներու զերմաշերմ սիրտին մեջ» (Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 102):

<sup>80</sup> Օշական, Համահանի, Ա., էջ 112:

<sup>81</sup> Նոյն:

<sup>82</sup> Սեւակը լրջմիտ փաստարկներով առաջարկում էր, եւ ոչ միայն մի քննադատի, տուեալ դէպքում՝ Սերգէյ Սարինեանին, այյեւ առհասարակ դրականութեան գիտութեան բաւկդներում, առաջնորդուել Օշականի «դիային զօրութեան զաղունիքի» բացայաբամբ, որքան էլ վերջինս լինի «սխալաշատ ու երերուն» (Պարուր Սեւակ, Երքերի Ժողովածու Յ Հատորով, Հար. 5 (Գրականադիտութիւն, Քննադատութիւն), Երեւան, «Հայաստան», 1974, էջ 313):

<sup>83</sup> Օշական, Մաթիկ Մելիքիստանեան, էջ 112:

<sup>84</sup> «Մարիկ Մելիքիստանեանց բարիքը ըրաւ մանաւանդ ինձի նօւեցնելու, սիրելի ընծայելու արեւելահայ արժանապատ բարեխասութիւնը,- գրում է նա՝ պաշտպանելով գեղարուեստական պայմանաձեւի կանոնը,- հակատակ անոր, որ հոն գործող տիպարները կնիքին տակն են ծամր կադապար դարձող իրապաշտութեան մը» (նոյն):

<sup>85</sup> Նոյն, էջ 10:

<sup>86</sup> Օշական, Զուգակչիա, էջ 204:

«Իրապաշտութիւն» տարագի տակ նա շարժումից առաւել որսում է «աւելի ընկերային հետարրութեանց դաշտ» (նոյն, 174), որը պատրաստ է ժխտելու: Իրապաշտութիւնն իր Համար Հոգեբանական Հարազատութիւնն է, բարք է, աշխարհաճանաչողութիւն, մինչդեռ ինքը դժգուն է իրապաշտութեան տակ միայն «ընկերային», «ընկերական» շարժումների հանաչումից, որը տեսնում է Զարթօնքի սերնդից յետոյ՝ «որպէս ամենէն յատկանշական կերպարանքը» (նոյն, 209):

<sup>87</sup> Եիրվանգագէի եւ Շանթի ստեղծագործական Հակադրութիւնը Օշականը «Աւալիզմն Զագատագրուելու նր Յանառութեանը Սէց» ենթախորագրով փոքր, ամփոփ նիւ-

թի սահմաններում տեսնում է վիպային ու իրապաշտ բախումի լոյսով. «Կ'ըսին, թէ Շանքի ամէնէն համրաւար խաղաքուն ներկայացման ատեն Շիրվանզադէ ուր չէ դրած ներկայ ըլլալու այդ անիրական, թերեւս պէտք պիտի ըլլար ճշդել անիրապաշտ թեմադրութեանց: Գրագէտի, արունստակիցի պարզ նախանձէ մը աւելի է շարժադրը այս արհամարհանքին. ատիկա կու գայ ուղալզմէն» (Նոյն, էջ 159 - ընդգծումը հեղինակինն է): Ամէն ինչից վեր այստեղ երեւում է Օշականի անթաքոյց դժգոհութիւնը ռէքալիզմի ափական թուացող ուժից:

<sup>88</sup> «Ըն գրական աշխատանքը չի գար ուղիշ ակէ, - խոստովանում է նա՝ չեշտադրելով կեանքի ու գեղարուեստականի յարաբերակցութեան մէջ իր յատակ կողմնորոշումը: Բոլոր իմ վիպակները, վէպերը վաւերատիպ անձնատրութեանց ու աւելի քան իրա դեպքուու արծագանզներ են» (Նոյն, էջ 107): Իսկ քիչ անց՝ գրական ոճի ընկալման մի նոր անկեղծ, անմիջական պոռթկում. «Ուրիշներ կը զրեն թերեւս քազմարի ազդակներ թելադրուած: Ես զրեցի միայն ու միայն մարդեր, այսինքն՝ մարդկային պատահարը սեւենելու, փրկելու թերեւս վիճնելի, քայլ իրաւ, հաստատ առաջարութեամբ» (Նոյն, էջ 108): Հետեւութիւնը մէկն է. Հոգեբանական քննութիւնը չի զոհաբերում տիպարանութեան իրապաշտական պահանջին, մարդու անհատական գծերի տեսողութիւնը աւելին արժէ հեղինակի համար, քան ընդհանրատիպերի փնտութուքը, երբ հապճագորէն սահում ես անձի, ես-երի, ներաշխարհի վրայով: Օշականը հիւսում է բարքը անհատների մանրամասներից:

<sup>89</sup> Նոյն, էջ 53:

<sup>90</sup> Նոյն: Ի դէպ, շատ աւելի ուշ լրջանում նման հոգեթաթաւ ապրումներ թուրք եւ քուրդ ընթերցողներին պարզեցնեցին գիւղագիրներ Յակոր Մնձուրու (1886-1978), Համաստեղի (1895-1966) եւ Մկրտիչ Մարկոսեանի (1938) պատմուածքների թուրքերէն բազմակի թարգմանական տպագրութիւնները Ստամբուլի «Արա» Հրատարակչատան շնորհիւ, երբ Արևելեան Անատոլիայից Պոլիս գաղթածները բնաշխարհի կարօտը սփոփում էին հայ հեղինակների «միջնորդութեամբ»:

<sup>91</sup> Նոյն:

<sup>92</sup> Օշական, Զուգակշիռ..., էջ 33:

<sup>93</sup> «Այս եր պատճառը, - գրում է վիպագիրը, - որ Նալպանտեանցը ուս գաղափարագրութեան զինակիր մը ըլլալը զիոնութիւն մը չնկատեց, իր ժողովուրդն խուած իր ուժերուն գործածնան մէջ իր վատնած նուանը վերածելով ժողովրդային հանգանակի մը» (Օշական, Մաթիկ Մելիքանեան, էջ 114):

<sup>94</sup> «Կը քան բաղդատել 19րդ դարու երկորոր կէսը արեւելահայ ու արեւմտահայ կեանքին, համոզուելու համար, թէ որքան հզօր միջամտած է պատ հոգին մեր ամէն արտայայտութեանց մէջ» (Նոյն)՝ եղրակացնում է արեւմտահայ բարբագիրը: Մակայն արդեօք իւրացումը գոհացուցիչ պիտի համարել, խիստ կասկածում է մեր հեղինակը դեռ փա՛ռք է թումանեանը (Նրա «...գործին մէջ Պուշկին (1799-1837) եւ Լեբոննով (ուս բանաստեղծներ) զգալի կնիք ունին»), իսկ ահա արեւելահայ վիպագիրները, իր տպաւորութեամբ, ոչինչ չեն վերցրել ռուսական մեծ արձակից: Եւ Հնչում է բողոքի ձայնը՝ «...ո՞ւր են Տուտոննակին եւ Թոլյարու ամոնց վեպին մէջ» (Օշական, Զուգակշիռ, էջ 41): «Ալաւ» հոգու «միջամտութիւնն» այստեղ երկինքկում է, հոգին մնում է հայութեանն անհաս բարձունքում:

<sup>95</sup> Օշական, Մաթիկ Մելիքանեան, էջ 114:

<sup>96</sup> Նոյն, ընդգծումը հեղինակինն է:

<sup>97</sup> Նոյն, էջ 113: Բծախնդիր քննադատը Օշականի ձեւակերպման ակնառու վրէպ, պատմական անախրոնիզմի օրինակ կարող է «գրանցել», քանի որ անփութութիւն է ռուսական կազմակերպուած հզօր կայսրութիւնը դիտել դեռեւ սլաւ ցեղերի իսառնուրդ:

<sup>99</sup> «Խրողութիւնը այն է, որ արևելահայ երիտասարդութիւնը - կազմակերպիչը հայ հոգին նոր յդացրին - աշակերտ է ուսւ աւանդութեան» (Նոյն, էջ 114): Մինչդեռ այս զարմանայի համակարգուած ներգործութեան դիմաց արեւմտահայերը, ըստ Օշականի, կարող էին հրամցնել միայն «անջատ հերոսներ ու որբայի կազմակերպութիւններ... ընդի[հանուր] սպասին» (Նոյն): Ակնարկը աւելի քան թափանցիկ է՝ արեւմտահայերի ագգային պայքարը տարերային է, անկազմակերպ, անջատական, ինչը ողբերգութեան նախադուռ է, անգամ եթէ քաղաքական ու ընկերային կազմակերպութիւններ փորձում են տէր վնակ չարժման ընդհանուր ընթացքին: Նոյն ներգործութեան բարերերութիւնը վիպասանը տեղափոխում է գրականութեան սահանքներ, ուր շահողը արեւելահայ հաստուածն է «ուռւս աւանդութեան չնորիւ»:

<sup>100</sup> Չուգագիր հայ գրականութիւնների ուռւսական եւ ֆրանսիական աղղեցութիւնների հիմնական տխուր յարսարարը ինքնութեան աստիճանի կտրուկ անկումն է: «Ու լեզուվ, ոչ արուեստի ըմբռնողութեամբ, ոչ գրական դաւանանըներով՝ արևելահայերը բան մը չին առած հսկայ գրականութենեն, որ ուսերունն է: Շաֆֆի, Շիրվանզադէ, Պոշիանց ոչինչով պարտական են ուսւ վեպին: Ընդհակառակն, «Սամուելի թերքօնազիրը ազդեցութեան տակն է բարգմանուած Շիմային և Հիմկոյին: Մինչդեռ ա-դնամտահայերը իրենց հարազատութիւնը վտանգելու շահ ենթարկուած են ֆրանսական ազդեցութեան:... Ամէն փոքր գրականութիւն, երբ շփոմի կը մոռն իրմ մեծին հետ, հարկադրուած է ինքնութենեն բան մը վրայ տալ» (Օշական, Չուգագիր, էջ 33-34):

<sup>101</sup> Թափառական կեանքով ապրած պոլսեցի տարեգիր Երեմիա Զելեպին (Քէօմիւրծեան) աշխատել է տարբեր երկրների թուրքական դեսպանատներում, շատ ճամբորդել, հրատարակել մի շարք աշխատասիրութիւններ, ինչի համար ստացել է Զելեպի պատուածունը: Նրա ճանաչում գտած գրքերի թւում են բազմահատոր Ժամանակագրութիւնը, ուր տեղադրական-աշխարհագրական ընդհանուր խորքի վրայ բարքերի, աւանդոյթների որոշակի ընդդրկումներ կան: Սակայն Օշականին, կարծում ենք, հասու է եղել Մոտամպոյայ Պատմութիւնը եռաշատոր տաղաչափուած հսկայածաւալ գրուածքը, որի երկրորդ հասորը, ի դէպ, վերահրատարակուել է հետո 1932ին Օշականի կիպրոսեան շրջանի տարիներին, երբ շարադրում էր Մաթիկ Մելիքիսանեանը, ուրեմն՝ պէտք է ենթադրել, որ գրքին ծանօթութիւնը բոլորովին էլ մակերեսային չէր: Հնարաւոր է նաև, որ Օշականի ձեռքի տակ եղած լինէին Մոտամպոյայ Պատմութիւնը 1913ին ու 1938ին լոյս տեսած առաջին եւ երրորդ հատորները, այնքան նրանց տրուած բնութագիրը բովանդակային խորը արժէք է գրողի մօտ: Մաթիկ Մելիքիսանեանում ակնարկուած է Զելեպիի Օրագրութիւնը, որը երուսաղէմում լոյս տեսաւ արդէն 1939ին, ինչը յանդեցնում է մեղ այն մտքին, թէ շատ աւելի ուշ է գրուագը մտել վիպական բնագիր:

Գրիգոր Դարանաղցին Բաբերդում ուսումնառութիւն եւ տարբեր վայրերում հոգեւոր ծառայութիւն անցնելուց յետոյ հաստատուել է Ռոդոսի գիւղաքաղաքում, ուր 1809ից մինչեւ իր մահը հայոց թեմի հիմնադիր առաջնորդն էր: Արտեղ էլ կեանքի վերջին տասնամեակում գրել է իր Ժամանակագրութիւնը, որի 1815ի երուսաղէմեան հրատարակութիւնը անպայման անցած պիտի լինի Օշականի ձեռքը՝ առաջ բերելով անքաւարարութեան զդացում: Հոգեւոր դասի բարքագրութիւնը վիպասանը դիտել է իրեւ տաղամկալի արձագանդի աւանդոյթ: Դեռ Արմաշից եւ Օրմանեանից ծնունդ առած անհաշտութիւնը եկեղեցական մատենագրական գերիշխան հակուածութեան հետ խորանում էր ժթ. դարի ժամանակադիրների քննութեան եղանակի մէջ, ուր տիրապետում էին կրօնական նեղմիտ հակասութիւնները, դաւանարանական մեծ ու փոքր հարցերը, որոնք ի սպառ դուրս էին մզում ժողովրդական կեանքը: Այսուհետէ, պէտք է նկատել, Դարանաղցին իր դիմաւոր գրքում զգայի ակնարկներ ունէր արեւմտահայութեան կացութեան շուրջ:

<sup>101</sup> Եղիս, 37:

<sup>102</sup> Օշական, Հուրգակյառ, էջ 132:

<sup>103</sup> Եղիս:

<sup>104</sup> Եղիս:

<sup>105</sup> Օշական, Մոթիկ Մայքրանեան, էջ 64-65:

EXPERIENCING THE EXAMINATION OF THE CULTURAL SYSTEMS OF  
WESTERN AND EASTERN ARMENIAN LITERATURE IN  
HAGOP OSHAGAN'S NOVEL, *MATIG MELIKKHANIAN*  
(Summary)

SOUREN DANIELIAN

spyurksd@spyurk-center.am

An essential part of the rich critical and literary heritage of the renowned author, literary historian, biographer, and thinker Hagop Oshagan (1883-1948) consists of the parallels he drew between Western and Eastern Armenian literature.

In his critical literary examinations Oshagan tried to avoid preconceptions and set a strict paradigm and criteria for his critical approach and evaluation. This approach is very clearly observed in his studies, namely *Zukageshir Arevelahay Yev Arevmedahay Kraganutyun* (Parallel evaluation of Eastern and Western Armenian literature), and *Arevelahay Panasirutyune Yev Echmiadzin. Karekin Gatoghigos Hovsepian* (Eastern Armenian philology and Echmiadzin: Catholicos Karekin Hovsepian). Contrary to these studies, Oshagan, gave free rein to his feelings and predispositions in his literary works and specifically in his novel, *Matig Melikkhanian*.

Oshagan wrote this novel during his Cypriot years (1924-1936), starting in the early 1930s. It is strange that the novel was first published in the mid-1970s, in the Beirut-based literary magazine *Pakin* decades after his death, and in a separate book in 2010. The novel has similarities to as well as differences from the other biographical novels Oshagan wrote.

In *Matig Melikkhanian* Oshagan preferred to disclose the psychological aspects of critical situations where the main character is being mocked. In the trying politics and history of the time, Oshagan considered the main character to be a version of Don Quixote. He depicts the travels and excursions of a young Caucasian hero who eventually arrives in Putania, with the aim of observing and learning the national and political perceptions among the Armenians. This little Armenian town of Putania is far beyond the borders of historic Armenia, "drowned in the Turkish sea". During his two week stay in the town Matig, the main character of the novel, learns a lot including the broad cultural context. His wish is to get in touch with the revolutionary aspirations of the townspeople. But instead, reluctantly, he encounters their extreme social poverty and an atmosphere of fear vis-a-vis the Turkish authorities. Thus, Oshagan condemned the political utopia and its vanity which were well expressed in the Armenian revolutionary movement of the time. Oshagan noted that the Armenian revolutionary movement was unaware of and ignorant about the needs of the Armenians. He considered this as one of the main shortcomings of the Armenian revolution.

Oshagan created Matig as a means of expressing his observations about the Armenian revolutionary movement. Matig is driven away by the revolutionary movement and is its victim too, as he is unable to penetrate beyond the surface and reach the inner meaning of the real issues. Oshagan raises questions about the role played by Eastern and Western Armenian literature in highlighting similar concerns regarding the Armenian revolutionary movement. From this perspective, Oshagan tries to state the meaning and value of national Armenian literature and the constraints which prevent the young generation from learning these facts.

---

Based on the issues raised in *Matig Melikkhanian* as well as on Oshagan's observations, Danielian examines the lives and the educational and cultural aspects of books authored by Eastern Armenian cultural figures like Khatchadur Apovian, Muratsan, Gomidas. A number of deep and extremely interesting parallels between the literary perceptions of Oshagan and others, like Hovhannes Tumanian, Levon Shant, Shaham Shahnur regarding the Armenian revolutionary movement are brought to light. Danielian draws an equally interesting parallel and opens up some common inner aspects of Oshagan and Fyodor Dostoyevki, noting that both perceived revolution negatively as a crisis of humanity.

